ԳԻՐՔ LIII



ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 4 ԱՊՐԻԼ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԷՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՑ., 7.
1909

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայերը Ռուսիայում. Մ. Բ. 3

Սգաւոր գետը. Յար. Պետրոսեան. . . . 7

Ծովի վրայ. Ռոճճor 8

Ընկերին. Կայծ 13

Ժողովրդի մէջ. թարգմ. օր. Ն. Աղանեան . . 14

Տէր-Դաբրիէլ Պատկանեան. վերջ. Ե. Շահազիզ . 31

Քօսա-Դաղ Լերան վկան. Լ. Խանզադէ . . 46

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Իմ երկերի քննադատութեան առթիւ. Մուրացան. 56

ԱՄՍՕՒԱՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ինչ ենք սպասում Վեհափառ Կաթողիկոսից.—Հոգևարքի ճիգեր.—Վերջին շնչին.—Լուրեր.—Ստացուած գրքեր.—Խմբագրութեան պատասխաններ. 62

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Հ. ՐՕԿԼ

ԱՆԳԼԻԱՑԻ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Թարգմանեց Վ.արդգէս Աղանեանց

ԳԻՆՆ Է 75 ԿՈՊ.

ԳԻՐՔ LIII

ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1909 № 4 ԱՊՐԻԼ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵՔՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ, ՊՕԼԻՍ 7
1909

ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ *)

Ը.

Նախընթաց գլուխներից տեսանք, որ հայերը արդէն IX-րդ դարից—այսինքն ռուս ժողովրդի պատմական ասպարիզի վրայ առաջ գնելու առաջին օրից—սկսում են ծանօթանալ ռուսների հետ և սակաւ առ սակաւ մուտք գործել Ռուսիայի սահմանները։ Հայ վաճառականը, հայ զինուորը, հայ բժիշկը—այդ առաջին հայերը Ռուսիայում—ճանապարհ են հարթում իսկական հայ գաղթականներին, որոնք XI-րդ դարից սկսած, մեծ խմբերով թողնում են իրանց հայրենիքը և գիմում են Կովկաս, Բիւզանդիօն, Ղրիմ, Լեհաստան, Գալիցիա և այլն։ Այսպիսով գաղթական հայերը հասատատում են Ռուսիայի սահմանակից երկրներում, որտեղից՝ նախ զանազան յարաբերութիւնների մէջ են մտնում ռուսների հետ, ապա և անցնում են Ռուսիայի քաղաքները։ Այդ պատճառով էլ XIII-րդ դարուց մինչև XV-րդ դարի վերջը ռուս-հայկական յարաբերութիւնների պատմութիւնը իսկապէս ասած վերոյիշեալ վայրերի գաղթական հայերի և ռուսերի միջև եղած յարաբերութիւնների պատմութիւնն է։

Հայ գաղութների թէ հին և թէ նոր պատմաբանները միաբերան վկայում են, որ XI-րդ դարուց սկսած հայ գաղթականութեան հոսանքը առանձնապէս ուժեղանում է XIII-րդ դարում, երբ իրանց հայրենիքում հայերը ենթարկուած էին քարբարոս ազգերի մահաբեր հալածանքների, իսկ նոր բնակավայրերում, ընդհակառակը, ցանկալի հիւր էին և արտօնութիւններ ու հովանաւորութիւն էին գտնում։

Յիշենք այդ գաղութներից մի քանիսը, որոնք Ռուսիայի հետ անշուշտ մշտական յարաբերութիւնների մէջ էին։

---

*) «Լումայ» 1909 № 3.

Այսպէս Գալիցիայի հայ գաղթականների մասին ասւում է [1], որ նրանց հրաւիրել է իշխան Լեւոն Դանիլովիչ 1280 թուին։ Նրանք եկել բնակուել են Լեմբերգ քաղաքում։ «Հայք այստեղ սեպհական վարչութեան (magistrat) մը տակ էին և այնչափ շատ, որ Գասիմիր Գ. մեծն յամին 1367 իրենց երկրորդ եպիսկոպոսին, Գրիգոր մեծին, իշխանութիւն շնորհեց, որ իւր աթոռն Լեմպերկ փոխադրէ։ Յետոյ 1379-ին հայք հոս նաև մեծամեծ արտօնութիւններ ընդունեցան»։

Կամենեցում հայերը բնակուեցին նախ XI-րդ դարում [2]։ Իսկ երկրորդ անգամ հայերը գալիս են վերոյիշեալ 1280 թուին՝ թաթարների հետ միասին, օգնելու Գալիցիայի իշխանին, որի հրաւէրով էին եկել, դրացի ազգերի դէմ։ «Հայք այն պատերազմներուն հաստ թիկունք եղած են Լեւոն Դանիլովիչին, զի իշխանն երկիրներով է վարձատրած նոցա ծառայութիւնները։ Հայք հաստատած են իրենց բնակութիւնը Կամենեցի մօտ, այն տեղը, որ մինչև ցայսօր Արմեանէ կը կոչուի... Այն ատեն սակաւաւոր եղած են հայք, զի նոցա երրորդ գաղթականութիւնն ի Հայաստանէ 1331-ին բաղմացուց նոցա թիւը, Կորեսթ իշխանի պայազատաց միջոց» [3]։

Ունգարիայում հայերը բնակւում են դեռ X-րդ դարում, իսկ 1243-ին-արդէն արտօնութիւններ են ստանում (Դ. Տ ա ն)։ Տրանսիլվանիայի հայերը 1355-ին ունէին իրենց եպիսկոպոսը։ «Հայք դէպի Մոլդաւիա և Վալախիա, ասում է Տանը, դիմեցին միևնոյն ժամանակ, երբ Բոդոլսկի-Կամենեց գացին, ուստի ԺԱ դարուն գաղթեցին, այն է 1046-ին, երբ Մոնոմաքոս յունաց կայսրն Հայաստան արշաւեց և 1064-ին, երբ Պարսիկք Անի մայրաքաղաքին տիրեցին։ Յետոյ գաղթականութիւններ եկան 1342-ին, երբ Պարսիկք Անի քաղաքը վերստին առին և 1418, 1475 և 1606 տարիներուն մէջ»։

Միւս կողմից հայերը XIII-րդ դարում գաղութներ են

---

1) Արևելեան Հայք ի Պուքովինա. Դ. Տ ա ն ի էջ. 4.

2) Տես գլ. Ե. մեր յօդուածի.

3) Հ. Ք. վ. Ք ո ւ շ ն ա ր ե ա ն. Պատմութիւն գաղթականութեան Ղրիմոս Հայոց. էջ 177.

հիմնում Վոլգայի ափերին գտնուած քաղաքներում (ուրեմն Ռուսիայի արևելեան սահմաններում)՝ Հաշտարխանում (ուր առաջ էլ պէտք է հայեր բնակուած լինին [1]), Ասխարայում, Մեծն Բուլղարում, իսկ յետոյ և Ղազանում։ Այդ գաղթականների ստուար մասը 1330 թուին թողնում է իր նոր բնակավայրը և տեղափոխւում Ղրիմ, ուր Ջենովացիների թոյլատուութեամբ բնակւում են Թէոդոսիայում և այլ մի քանի քաղաքներում ու գիւղերում։ Այսպիսով ուրեմն հայերը գաղթականութիւններ են հիմնում Ռուսիայի սահմանակից երկիրներում՝ Լեհաստանում, Գալիցիայում, Մոլդովիայում, Ղրիմում, Խազարների և Բոլղարների մայրաքաղաքներում, Ոսկէ խանութեան մէջ և այլն։ Այսպիսի կիսաշրջանով (w—s—o) հայերը բոլորում են Ռուսիան այն միջոցին, երբ նա ամբողջապէս ընկնում է թաթարաց լծի տակ (1240—1480)։ Ռուսները զբաղուած էին իրանց տնային գործերով, երկպառակութիւններով ու մասամբ ինքնապաշտպանութեամբ և ամենևին հնարաւորութիւն չունէին մտածելու դրսի աշխարհի և ազգերի հետ անմիջական յարաբերութիւններ ստեղծելու մասին։ Միևնոյն ժամանակ թաթարները վերացնում են նաև Բուլղարների և Խազարների առևտրական միջնորդութիւնը։

Թ.

Գաղթական հայերը չէին կարող չօգտուել այս բարեյաջող հանգամանքներից, մանաւանդ որ նրանք միջազգային յարաբերութիւններ պահպանելու համար մի քանի առաւելութիւններ ունէին համեմատած ռուսների և թաթարների հետ։

Նախ հայերը աւելի քաղաքակրթուած էին և առևտրի մէջ աւելի փորձառու. նրանք անմիջական յարաբերութիւնների մէջ էին Բիւզանդիոնի, Փոքր Ասիայի, Հայաստանի և Պարս-

---

1) Հետաքրքրական է, որ ժամանակի մասին է խօսքը հետևեալ տեղեկութիւնների մէջ՝ «Армянскій Крутецъ—гора въ Симбирской губ. съ сокольею. называется такъ отъ Армянъ, взбунтовавшихся нѣкогда въ Астрахани и засѣвшихъ на сей горѣ. Бывшаго у нихъ тутъ укрѣпленія еще и понынѣ видны остатки»—յետոյ նկարագրւում է այդ լեռնային ամրութիւնները։ Տես Географическій словарь Россіиск. Государства 1801 г.

կաստանի հետ. զանազան տեղերի գաղութների միջև մշտական կապ էր պահպանում՝ Հաշտարխանի հայերը կապեր ունէին Քէֆէի հայերի հետ, վերջիններս—Լէմբերդի և այլն։ Այդ հայերը մի քանի լեզուով էին խօսում. միևնոյն ժամանակ նրանք հրէաների նման միջազգային ժողովուրդ էին ներկայացնում, որովհետև ոչ ռուսների և ոչ թաթարների հետ քաղաքական հաշիւներ չունէին։ Այդ պատճառով էլ, թէ իրանց հիւրընկալող պետութիւնների և թէ ռուսների ու թաթարների համար այդ գաղթական հայերը պէտք է ցանկալի և անփոխարինելի առևտրական միջնորդներ լինէին և իսկապէս էլ եղան։

Կարճ ժամանակուայ ընթացքում գաղթական հայերից ոմանք այնքան հարստանում են, որ թագաւորներին ու իշխաններին փողով օգնութեան են գալիս, XIV—XV-րդ դարու Ֆլորէնցիայի բանկիրների դերն են սկսում խաղալ։ Խոշոր հայ դրամատէրերը այդ միջոցին սկսում են և խոշոր առևտուր անել՝ դերեհանութեամբ և կապալառութեամբ զբաղուելով։

Մ. Բ.

(Կշարունակուի)

ՍԳԱՒՈՐ ԳԵՏԸ

Մութ գիշերին ժեռ ափերին
Գետն է զարկում ողբաձայն,
Գետը—Արագ, սրտին երազ՝
Զինաղագեղ, դիւթական։

Երգ է կանչում, ազդու հնչում
Աստեղազարդ երկնի տակ,
Սուգ ու լացով, ողբ ու կոծով
Ուզում մարել իւր կրակ։

Բայց անհամար աստղերը վառ
Որպէս հուրը սրտայոյզ՝
Այնտեղ շողում, անվերջ լողում,
Մնում են վառ մինչեւ լոյս...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԾՈՎԻ ՎՐԱՅ

Հայելանման ծովը՝ մեղմ, հանդարտ ծփում էր ափերին։ Մեր նաւակը սլանում էր առաջ, արևի շողերով ողողուած ջրերի մակերևոյթի վրայ ու առանց երերումի, առանց դանդաղելու— միակերպ ու միարնթաց։ Մենք նամբորդներս՝ ուրախ տրամադրութեամբ, նայում ենք հիասքանչ ծովի անսահման հորիզոնին, որի հետ խառնուած՝ արևի վառ շողերը, մի առանձին տեսք են տալիս ջրերին, ուր մարդու հայեացքը շաղուում է, շփոթուում, չգիտէ—ի՞նչի նմանութիւն տայ այդ տեսարանին, կարծես՝ ծովը ժպտում է, ծիծաղում. մենք նոյնպէս ժպտադէմ հիանում ենք՝ այդ ֆանտաստիկ տեսարաններով...

Մենք ամենքս մեր առանձին խոհերն ունենք, մեր փափագը, մեր իղձը, մեր վառ տենչը և մեղ կեանք տուող—յոյսը...

Երկինքը պարզ է ու յստակ, որպէս ծով. երկուսն էլ համապատկեր են միմեանց, երկուսն էլ՝ կապուտակ, երկուսն էլ՝ հայելու նման։ Երկնքում փայլում է—արևը, ծովի վրայ, ջրերի հետ խառնուած, նրա շողերը... Երկար նայում ես, և ասես թէ՝ երկնակամարն ու ծովը՝ գրկուում են, միանում իրար...

Երկու նաւաստի իրանց յաղթ բազուկներով թիավարում են և մեր նաւակը՝ թեթևակի վար ու վեր անելով՝ հանդարտ սահում է առաջ. նրա առագ ընթացքը փրփուր է առաջացնում ջրի երեսին և սպիտակ-փայլուն հետք թողնում իր ետևից։

Ծովափը դեռ հեռու է...

* * *

—Շատ ժամանակ է, որ դուք ծովային աշխատանքով էք պարապած. հարցրի ես նաւորդներից մէկին, որի նիհար ու դունատ դէմքի բարի գծերը արտայայտում էին նրա ինչպէս լինելը:

Նա՝ իր արագաշարժ աչքերը ինձ ուղղելով, պատասխանեց.

—Շատ չէ, քսան երկու տարի...

Ես զարմացայ, որ այդ մարդը ծովի վրայ այդքան ապրել է, որտեղ ամեն րոպէ, ամեն վայրկեան մահ է սպառնում... և էլի, նա ասում է.—«շատ չէ»: Ես հարցրի.

—Ի՞նչու չէք թողնում այդ գործը, այստեղ ամեն վայրկեան մահը պատրաստ է, և դուք կարող էք վնասուել...

Նա ժպտաց ինձ վերայ.

—Իսկ ի՞նչով ապրենք... հարց տուեց ինձ.—ի՞նչով պահպանենք մեր գոյութիւնը...

—Այստեղ միշտ վտանգ կայ. նկատեցի ես:

—Հողի վրայ էլ վտանգ կայ. ասեց նա—այնտեղ էլ մահ կայ, այնտեղ էլ ծովի ալիքների նման կատաղածներ ու փրփրածներ կան... ի՞նչու չէք թողնում հողը... Ձեր հայրը որտեղ է մահացել.. հարցրեց ինձ:

Ես շփոթուեցի այս անակնկալ հարցից. և վայրկենական լռութիւնից յետոյ պատասխանեցի յաղթուած ձայնով.

—Մեր տանը.

—Ի՞նչի մէջ...

—Անկողնի մէջ.

—Իմ հայրն էլ՝ սուզուել է այս ծովի տակը. ես էլ պէտք է գնամ սրա խորքը... մեր մահը՝ ջրի մէջ է լինում, մեր գերեզմանը ջուրն է... Իսկ ձերը, պարոն, ձեր հօր նման անկողնի մէջ կը-լինի. ձեր գերեզմանը նեղ-ծածկուած հողէ փոսն է. դուք այնտեղ էք հանգստանում ու յաւիտեան ննջում. իսկ մենք՝ հանգստանում ենք լայն ու արձակ ծովի յատակում... Մահից ոչ ոք չէ կարող խուսափել. մահը ամեն տեղ մահ է, անխուսափելի ու դաժան... ի հարկէ բոլոր ծովի աշխատաւորներս այստեղ չենք մեռնում...

Նա լռեց. ես նոյնպէս լռեց. էի:

Նրանք՝ թիավարելով առաջ էին քշում նաւակը. ծովը

ծփում էր հակայի օրորով. մեր կոկիկ, սիրուն նաւակը տարւում է առաջ։

Ծովափը մօտ էր։

***

Ցանկարծ ծովը տնքաց, ասես նաւակը մեծ բեռ էր նրա մէջքին. նա յօրանջեց և հառաչեց, ուռցրեց կուրծքը, և նրանից վիժեցին ուռուցիկ յեղյեղուկ ալիքներ, որոնք զարկուեցին իրար, մռնչացին, յուզուեցին ու թափ առան թռան վեր— ինչ որ նպատակով... դարձեալ գլորուեցին ցած, փշրուեցին, ցիր ու ցան եղան... ընկան գիրկը խռովայոյզ՝ մրմռացող— մայր ծովի, և էլի շփուեցին իրար, կատաղեցին ու թափ առան...

Մեր նաւակը, որպէս տաշեղ՝ թրթռաց, տարուբերուեց ու երերալով կամաց-կամաց-անցաւ առաջ...

Ճամբորդներս գունատուեցինք և համարեա կիսամեռ, սկսեցինք փրկութիւն մրմնջալ...

Զարհուրանքի սոսկում էր այն, որ բոպէական տիրեց բոլորիս։

Հրէշաւոր՝ այլանդակ, ուռած ալիքները մէկ-մէկու ետևից՝ գալիս էին ու գալիս... հրում էին նաւակին. նաւակը թպրտալով՝ մերթ սողում էր կնճռոտ ու երկունքով բռնուած ծովի երեսով, մերթ բարձր ու ցած անում, շեղւում և վերստին ուղղում ընթացքը։ Նաւաստիները ամեն հիդ զորձ էն դնում, նաւակի ղեկը ուղիղ պահել, և ջլուտ բազուկներով՝ անընդհատ թիավարում են, թիավարում...

Ծովը աւելի աղմկայոյզ է դառնում, ալիքները՝ աւելի կատաղի ու սպառնալի։

Բոլորի իղձերը, փափագներն ու սպասելիքները խորտակուեց, մնաց յոյսի միայն մի բարակ, նսեմ շողշողայող նշոյլը. նա, ինչպէս ծմերային արևի վերջալոյսի գունատ շողը՝ դեռ կենդանի էր, դեռ փայլում էր բոլորի համար։

Մի վայրկեանում կարող է մեռնել իղձը, փափագը, ծրգտումը և ամեն ինչ... բայց ո՛չ— յոյսը մեռնում է այն ժամադակ, երբ յուսացածն է մեռնում կամ յուսացածը չի իրագործ-

ւում. յոյսը՝ հանգստութիւն է տալիս. յոյսը՝ կեանք է տալիս...

Ես ամեն ինչ թաղեցի իմ սրտի խորքում, իսկ յոյսս մինչև անընկճելի և չուզեց դերեզման մտնել... այդ սպասում համբերում էր...

Մահի ահաւոր երկիւղը գալարում էր մեր բոլորիս կրծքերի տակ։

Երկունքով բռնուած ամուլ ծովը, շարունակում էր աղմկայոյզ փոթորկուել և ինչպէս մի հսկայ գազան, որ սովոր է անյագաբար իր կրքերին խաղալիք ու զուարճալիք դարձնել-ճանկերն ընկած զոհին, այնպէս էլ ծովը իր քմահաճոյքներին էր ծառայեցնում մեր նաւակը և միջի կիսամեռ ճամբորդներին։

Ալիքները զարկում, խփում էին իրար ու մռնչում կատաղաբար, որպէս մենամարտող վիշապներ, հրում էին նաւակին և խորտակելու չափ թեքում ու ծռում։

Մրրիկը աւերում էր ծովի երեսը...

Նաւակը ալիքների գրոհի առաջ՝ փախչում էր և տարուում խելագար թափով, ինչպէս փետուրը ուժեղ քամու առաջ։

Նաւավարները իրանց վարժ հմտութեամբ՝ թիավարելով ուղղում էին ընթացքը, ուռած ալիքները քամակից գրոհ էին տալիս և ասես քրքջում էին աւերումը, հեգնում էին մեր երկիւղը ու յեղյեղուտ օդակներով շարան-շարան գալիս էին ու գալիս...

Ծովափը մօտ էր, բայց երկիւղը, զարհուրանքն ու սոսկումը դեռ մեծ էր...

Ցանկարծ անապատելի, հսկայական լափուն, մեր նաւակը շպրտեց հեռո՜ւ...

Մենք ազատուեցինք... զարհուրանքի ու սոսկալի բոպէները մեռան...

Ցոյսերի մի նոր արշալոյս ծագեց բոլորիս համար...

Սակայն ծովը, այդ դարաւոր հրէշը դեռ շարունակում էր փոթորկուել, մռնչալ, տնքալ ու անվերջ տնքալ...

* * *

Նիհար նաւավարը մօտեցաւ ինձ և բռնեց թևքիցս...

—Բարեկամ, ասաց նա—դուք հօ տեսաք այս փոթորիկը-

այսպիսիները շատ ենք տեսել և շատերին ճանապարհ դրել... Ասացէք խնդրեմ, մի՞թէ աշխարհը մի ծով չէ՞. մերթ՝ ադմկայոյզ, մերթ՝ կատաղի... Աշխարհ, ծո՛վ... Միևնոյն է, երկուսն էլ նման են... Աշխարհ, որտեղ նոյնպէս՝ փոթորիկներ, մրրիկներն ու հողմերը անպակաս են... կատաղի ալիքները, խենթութեան արդանդից վիժած յուզմունքներն ու կրքերը, իրանց անուղղելի քմահաճոյքներով լի՞ են, բարեկամ։

Նա թեւքս բաց թողնելով՝ շարունակեց նոյն յաղթական ձայնով.

—Մի՞թէ կեանքը մի նաւակ չէ՞... Փոթորիկների, հողմերի, ուռած ալիքների առաջ՝ դողդողացող մի նաւակ, որին ամեն կերպ աշխատում են կլանել յուզուած ալիքները՝ իջեցնել անյագուրդ ծովի արդանդը... և իրանց ղղուելի քմահաճոյքներին սարուկ ու խաղալիք դարձնել... Կեանք-նաւակը, այդ հալածանքի, ճնշման ու գերի—նաւակը։

Եւ մի՞թէ մարդը մի նաւավար չէ՞... որ ամեն կերպ պէտք է աշխատի նաւակի դէկը ուղիղ պահել և գերմարդկային ճիգեր գործ դնել, նաւակը հողմերից ազատելու համար...

—Բայց վա՜յ այն նաւավարին, որ արհամարհում է այդ բոլորը և ուշադրութիւն չի դարձնում սպառնացող վտանգին, որը կարող է իրան և իր ծանրաբեռնուած առագաստներով նաւակը իջեցնել ծովի անդունդը...

Նա թողեց և հեռացաւ։

Ես դարմացած նայում էի նրա ետևից։

Ս. ՐՕՖՖՕՐ

ԸՆԿԵՐԻՆ

Ահա, առաջիդ հարթ ու լայն ուղի
Դա երջանկութեան որբանն է տանում.
Գընա դորանով առանց երկիւղի,
Դու կը վայելես հրճուանք ու խնդում։

Եւ քո կեանքի մէջ չես տեսնի երբէք
Ոչ հոգու կսկիծ, ոչ սրտի ծրմլում,
Հաճոյք ու վայելք է ամենուրէք
Եւ կեանքը այնտեղ մի գոյնով է գնում։

Կայ մի այլ ուղի—փոշոտ, քարքարոտ,
Որը, տես, ծրգւում է դորա կողքին.
Ախ՝, այս նեղ ուղուն ոչ ոք չի կարօտ,
Բոլորն ատում են սորան դառնագին.—

Ինչպէս ցաւն ու վիշտն է այնտեղ օտար
Եւ մարդն ապրում է հանգիստ, անխորով,
Նոյնպէս եւ անդորրն է այստեղ օտար
Եւ մարդն այրւում է կեանքի ցաւերով։

Կեանք էիր փընտրում՝, ահա քեզ, ընկեր,
Երկու զանազան կեանքի ծանապարհ.
Մէկը քարքարոտ եւ մրոայլ պատկեր,
Միւսը գրրաւիչ, հարթ ու հաւասար...

Ղ.ԱՅԾ

ԺՈՂՈՎՐԴԻ ՄԷՋ *)

ՐՕԶԵԳԷՐԻ

Տանուժկերորդ կիրակի

Էհ, սիրելիս, ոչինչ օգնել չի կարելի։ Իմ այս նամակից էլ օդրկօլօնի հոտ չի գալ։ Մարտի կէսն է, գարունը դեռ հեռու է և սոիպուած եմ դարձեալ փարախն տուանձնանալ և այնպէս դրել քեզ։

Անցեալ շաբաթ ուալ օրերին մի անգամ երիտասարդ Ռոխերլի հետ միասին նկուղում նստած բուրդ էինք դղում, որը աշնան վերցրել էին ոչխարներից։ Ոչխարից մինչև ջուլհակի գործիքը նոյնքան հեռու է, որքան հասարակ կտորից՝ բանկային տոմսակը։ Այս գործը առանձին զիտութիւն և վարժողութիւն է պահանջում։ Սակայն բուրդը դղել երեխան էլ կարող է։ Միմիայն ես, որ առաջ քան այսպիսի տարօրինակ կերպով երեխայի փոխուելս, արդէն տղամարդ էի դառել, պէտք է վարժուէի դորանում։ Նկատելով, որ թելերը հատ-հատ վերցնում և մասմաս եմ տնում, Ռոխերլը ցոյց է տալիս, թէ ինչպէս պէտք է անել։ Նրա համար էլ ծանր է այս աշխատանքը, որովհետև մէկ ձեռքով է գործում։ Նայում եմ այս գեղեցիկ երիտասարդին, որ դուցէ իր ամբողջ կեանքում դատապարտուած է թերանդամ մնալու և հարցնում, թէ ինչպէս պատահեց այդ դժբաղդութիւնը նրան։

Նա բարձրացրեց վրաս խոշոր, ճղճիմ, երբեմն առանձնայատուկ կերպով փայլող աչքերը և ասաց։

—Վայրի այծն է մեղաւոր։

Յետոյ յանկարծ ծիծաղեց և շարունակեց.

—Վայրի այծը։ Վայրի՞ այծ ասացի։ Տեսնում ես, հանդել, ինչ վատն եմ. ինչով է վայրի այծը մեղաւոր, որ ես ուզեցայ հրացան արձակել։

---

*) Լումայ 1909 № 3.

—Ճշմարիտ է, հին պատմութիւն է այդ։ Գիւղացին պէտք է իր արտերը պաշտպանէ վայրի կենդանիներից. և մինչդեռ խեղճ մարդը պահպանում է իր ունեցածը, անիծեալ որսորդը գնդակահարում է վայրենի այծին, բայց գնդակը վրիպում է և վիրաւորում գիւղացուն։

—Ոչ, հանդել, այս դէպքում այդպէս չէր։ Տեղն էր ինձ։ Վայրենի այծը ծմեռը ոչ ցորեն է ուտում և ոչ խոտ։ Հէնց այնպէս ուզեցայ արձակել։ Իսկ երբ մի բանի ցանկութիւն եմ զգում, ոչ մի բան չի կարող յետ կասեցնել ինձ... երբեմն ամբողջ կէս գիշեր սպասում էի վերև հրացանը ձեռքս։ Բայց վիճակուած չէր ինձ... մի անգամ հրացանը վրիպեց. մի այլ անգամ երբ նշան դրի, կրակելու ձայն լսուեց, միայն ոչ իմ հրացանի։ Որսորդն էր արձակել, գնդակը կպաւ ձեռքս և մինչև այսօր էլ դեռ մնում է մէջը։ Նոյնիսկ չ'կարողացայ մտածել, որ գնդակահարել են ինձ։ Երբ ուշքի եկայ, քահանան կանգնած էր մօտս և խօսում էր մահուան մասին։ Թող ինչ ուզում է լինի, մտածեցի ես, և կրկին քնեցի։ Բայց գնդակը չթողեց երկար քնելու...։

—Նեղացնում էր։

—Ի հարկէ նեղացնում էր։

—Ո՞վ կրակեց քեզ վրայ։

—Անիծեալ Կոնրադ որսորդը։

—Հախն էր քեզ։

—Ի հարկէ հախն էր։ Որովհետև որսի վրայ էի արձակում, իսկ այդ արգելուած է։ Սակայն որսորդն էլ իրաւունք չունէր մարդ գնդակահարելու։ Նա կարող էր հրացանս խլել։ Եթէ հակառակէի, կարող էր խփել ինձ։ Բայց ո՛չ։ Այս գընդակը մարդասպանի գնդակ էր։ Նա թշնամի է ինձ։ Ասում են որ կարող եմ դանդատուել։ Բայց ի՞նչ օգուտ եթէ նրան բանտարկեն։ Ձեռքը դրանով չի առողջանայ։ Նա աւելի թանկ արժէ, սիրելիս։

Այդ վայրկենին կ'վախենայիր նրանից։ Ուզեցայ հանգստացնել նրան։

—Իսկ որսորդը վախեցաւ,—շարունակեց Բոխերը։ Նոյն

օրը եկել էր առողջութիւնս հարցնելու։ Ասում էր, թէ ուզում էր միայն հրացանը ձեռիցը վայր դցել տալ. իսկ ինձ բոլորովին պատահմամբ էր դիպել։ Ես չեմ էլ բարկանում քեզ վրայ, ասացի։ Գուցէ երբեւիցէ փոխարէնը կհատուցանեմ քեզ։

—Ես քո տեղը լինէի՝ աւելի տկար ձեռքի մասին կմտածէի, քան որսորդի։

—Ձեռքը կառողջանայ։ Ձիւթը գնդակը դուրս կքաշի։

Որքան ցաւում եմ երիտասարդի վրայ։ Զէ՞ որ նոր է սկսում կեանք մտնել։ Ի՞նչպէս պէտք է աշխատի և պաշտպանուի։ Բայց նա վստահութեամբ է նայում իր մշուշապատ ախուր ապագային։

—Ոխերոյ, ասի ես,—Ձեռդ կառողջանայ։ Բայց ծիւթը չի օգնի. բժիշկ է հարկաւոր քեզ։

—Արդէն հարցրել ենք Մարենցելին, որը զանազան դեղեր է պատրաստում։ Նա ասաց որ բժշկի չդիմենք։ Բժիշկը անմիջապէս ձեռքը կանդամահատի։ Աւելի լաւ է փչացած ձեռքը մնայ։ Իսկ գնդակը դուրս կգայ։ Լիալուսինը պէտք է երեք անգամ լուսաւորի նրան։

Այժմ հասկացայ, թէ ինչու երեք շաբաթ առաջ իրիկնադէմին տղան կանգնած էր դրան առաջ և դժբաղդ ձեռքը դէմ անում ծագող լուսնին։

—Գուցէ այսպէս աւելի լաւ է։ Չէիր կարող քեզ զսպել, տեղն է քեզ։

—Իսկ դու չե՞ս խղճում խեղճ անասունին։ Զէ՞ որ նա կեանքը քեզանից պակաս չէ սիրում։

—Բայց որսորդը մտածում է դորա մասին։ Եւ ժամանակ էլ չկայ մտածելու, այլապէս կենդանին կփախչի. կամ թէ, միւնոյն է, մի ուրիշը կսպանի նրան։

—Թող, Ոխերոյ, միայն դողին է յատուկ այդպիսի պատճառաբանութիւնը։

—Ճշմարիտ է, բայց աշխարհի երեսին որսորդութիւնից աւելի զուարճալի բան չկայ։

Եւ միւնոյն տղան մարմնացած հոգացողութիւն է ներկայացնում ընտանի կենդանիներին վերաբերեալ։ Ամեն ճաշից յետ, պատուհանից փշրանքներ է ածում ճնճղուկներին ծմեռուայ համար։

Կովերի մասին, ճիշտ է, Բարբելն է հոգում. իսկ որտեղ նա է, ուրիշ ոչ ոք պէտք էլ չէ։ Անցած օրը մեղ մօտ փոթորիկ էր։ Գիշեր էր։ Ինձ կանչեցին սենեակը, որ օդնեմ աղօթքի մէջ և եթէ կայծակը խփէ, պատրաստ լինեմ։ Ամպը գոռում էր ահռելի կերպով։ Ռոխերլը շապկանց կպել էր վառարանին, դողում էր, լաց լինում, ականջները ծածկում ու քրոջը կանչում։ Բարբելին արթնացրին և երբ նա եկաւ, Ռոխերլը բոլորովին հանգստացաւ։ Աղջիկը չէր աղօթում, ոչինչ չէր ասում, այլ միայն մտախոհ կերպով դուրս նայում։ Շուտով փոթորիկը անցաւ և ամեն ինչ հանդարտուեց։ Կարծես աղջիկը հանդստացրեց բնութիւնը։

Դարձեալ նրա մասին եմ խօսում։— Բայց չէ՞ որ լիմարութիւն է այս։

ՔՈ ՀԱՒԱՏԱՐԻՄ Վ.ԱՐԶՈՒՈՐ։

Տասներեքուերորդ կիրակի

Զգայուն և ցնծացող մարդիկ կասէին, որ համաբնակիչներս բարքի վեհանձնութեան և սիրելի բարեձևութեան տէր մարդիկ են։ Ես ուղղակի կասեմ, որ ամենաբարի մարդիկ են։

Բացի ընտանիքի փոքր ինչ խիստ մօրից, ամենքն էլ հեզութեամբ և ուշադրութեամբ են վերաբերում դէպ իրար։ Երբ հօր շնչարդելութիւնը սկսւում է, բոլորեքեան էլ աշխատում են թեթևացնել նրա ցաւերը, թէպէտև կիւսախոտի մի քանի փշրանքն աւելի ուժեղ է լինում, քան շրջապատողների ամբողջ սերը։

Բայց երբ Մարենցելը, ինչպէս օրինակ այժմ, խոտ չի բերում, ամենքն էլ յուսահատութեան մէջ են լինում։ Պառաւը, ինչպէս երևում է, նեղացել է. բայց ինչի՞ց։ Արդեօք նրա՞ համար, որ մայրը արդանակը նրա համար նստարանի վրայ պատրաստեց և ոչ սեղանի։ Կամ թէ որ Ֆրանցելը նրա խլրդաշունը «շուն» անուանեց։ Սակայն խոտը սպառուել էր և Ռոխերլին ուղարկեցին պառաւին որոնելու։ Նա գտաւ պառաւին հովտում, ուր իր դեղին խլրդաշան հետ միասին, որին միշտ փոքրիկ կողովի մէջ հետը մանր էր ածում, ողորմութիւն էր հաւաքում։ Ռոխերլը ծնողների կողմից հրաւիրեց նրան մօր ձեռքով

պատրաստած թարմ կարագը հաշակելու։

—Բարի, ասաց պառաւը—եթէ բարի նպատակով են խնդրում, չեմ փախչի։ Եւ Ռոխերլի հետ միասին բարձրացաւ սարը։ Սենեակը մտնելով, նա վերցրեց իր լայնեզր գլխարկը և կծու հարցրեց.

—Որտեղ կհրամայէք նստեմ։

—Ինչտեղ կամենաս, ինչտեղ կամենաս, Մարենցել, ասաց մայրը—կատարեալ դժբաղդութիւն է մեզ պատահել. ծերուկի կուրծքը շարունակ ցաւում է։

—Ահա թէ ինչ։ Գարնանը այդպէս է լինում։ Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել։

Իսկ խոտի մասին ոչ մի խօսք։

Երբ Մարենցելը կերակրեց իր շանը, և ինքն էլ կերաւ կարագով հացը, մայրը կիւսախոտ խնդրեց նրանից։

Մարենցելը վիզը երկարացրեց, աչքերը չռեց, ձեռքերը դողացին։

—Կարծում եմ կարագով հիւրասիրելու համար չէ որ հրաւիրում էք խեղճ մարդուն, այլ կիւսախոտ ստանալու համար նրանից։ Աւելի լաւ կլինէր սկզբից ասէիք։ Հետս խոտ չունիմ։

Ես վճռեցի մի նոր դաս տալ պառաւին։

—Տիրուհի, ասացի ես այնպիսի տեսք ընդունելով իբր թէ ամենևին ուշադրութիւն չեմ դարձնում Մարենցելի վրայ,—երբ հօր շնչարդելութիւնը կրկին սկսուի, ես լաւ դեղ դիտեմ դրա դէմ. պէտք է վերցնել դեղին խլրդաշան ճարպը։ Սրտի ցաւի համար աւելի լաւ միջոց չկայ։ Պէտք չէ մեզ հոտած կիւսախոտը։

Պառաւ Մարենցելը նայեց ինձ այնպիսի տեսութեամբ, որ դժուար է նկարագրել և սկսեց քրքրել կողովը։ Երևաց մեծ քանակութեամբ կիւսախոտ, վէրքերի համար ծիւթ և այլ բաներ։

Երբ նա գնաց և հայրը ծուխը ներշնչեց, ես այնուամենայնիւ նկատողութիւն ստացայ։ Աղամն ասաց, որ թոյլ չի տայ իր տանը ծաղրել առողջարար միջոցները։ Պէտք է գոհ լինել Աստծուց, որ այսպիսի խոտեր է ստեղծել։ Իսկ շանը ինչու վի-

բաւորել։ Թող խեղճը մխիթարուի նրանով։ Դեռ լաւ է որ մինչև այժմ սիրում է նրան։

Բայի տկար որդուց, ծերունիներին խիստ անհանգստացնում է և հեռաւոր դինուոր Վալենտինը։ Վաղուց սպասում են նրա արծակուրդին։ Ծննդեան ուղարկել էր իր լուսանկարը։ Բոխերը կախեց այն պատից սրբերի շարքում, բայց ծերը ցած բերեց։

—Առանց այդ էլ աղօթքի ժամանակ շատ ես մտածում տղայի համար. պատկերին նայելով աւելի շատ կմտածես։

Ընդհանուրի պարծանք է փոքրիկ Ֆրանցելը։ Ուսուցիչը շատ է գովում նրան։ Միւս տարի ծերերը կուզենային հոգևոր դպրոց ուղարկել նրան։ Հոգևորականների և մոլեռանդ քահանաների մեծ մասը գիւղական դասակարգից են առաջ գալիս։ Նրանց մէջ է գտնւում դեռևս երկրագնդի անծեռնմխելի ոյժը և նրանք էլ նոյն տղեցութիւնն ունին պատմութեան վրայ, ինչ որ ուրիշ երևոյթները։ Ծերունիներիս ամենանուիրական ցանկութիւնն է, խորը ծերութեան հասակում ներկայ լինել իրանց որդու ժամերգութեան։

Բայց ամենաթանկագինը, նրանց աչքի լոյսը Բարբելն է, թէպէտև գորա մասին բոլորովին բան չեն ասում։ Եթէ նա բացակայ է, ամենքը հարցնում են նրան. եթէ փայտ է կոտրտում, բոլորն էլ անհանգստանում են, ծանր չէ՞ արդեօք այդ աշխատանքը նրա համար. եթէ ճաշի ժամանակ դդալը ցած է գնում, յուզուած հարցնում են, ինչու՞ չես ուտում, զաւակս։ Դիշերները հո չէ՞ս մրսում, Բարբել։ Ոչ մի տեղդ հո չէ՞ ցաւում, Բարբել։

Մի անգամ, երբ աղջիկը տանը չէր, ակամայ ունկնդիր եղայ Ադամի և կնոջ խօսակցութեան։

—Սիրտս անհանգիստ է.

—Ինչի՞, կնիկ։

—Ինքս էլ չգիտեմ թէ ինչու։

—Եթէ ծանր ես զգում քեզ, խորհուրդ եմ տալիս մի փոքր փնթփնթալ և ամեն ինչ կանցնի...

—Կատակ մի անի, ծերուկ։ Հանաքների սիրտ չունիմ։

Մի՞թէ չես նկատում, Ադամ, որ այժմ նա միշտ տխուր է։

—Ո՞վ։

—Բարբելը, և ամենևին չի ծիծաղում։

—Բա՞րբելը։ Չի՞ ծիծաղում։ Գիտես այժմ ես էլ այդպէս եմ կարծում։ Ցիշո՞ւմ ես, առաջ նրան տան զանգակ էինք անուանում։

—Այժմ այն չէ, և վաղուց արդէն այն չէ։ Զեմ էլյիշում թէ երբ էր ծիծաղում։ Զուրը ընկնելու օրից բոլորովին փոխուեց։

—Ինչից կլինի արդեօք։

—Ցանկարծ եթէ մի բան պատահած լինի։ Ո՜հ, երկնային Թագուհի, մտածելն անգամ զարհուրելի է։

—Երևի ծեռքից կլինի։

—Ձեռքի՞ց։ Նրա ծեռքերը առողջ են։

—Ոչ, Ռոխերլի ծեռքի պատճառով։

—Բայց ինքը, Ռոխերլը, չի գանգատւում։

—Կարծում ես շատ ուրախ է։ Էհ, մօրը այդպիսի բան մի ասի. թէ որ կարելի լինէր բոլոր որդոց տանջանքները իր վրայ վերցնել, ո՞րպիսի ուրախութեամբ կստանձնէր մայրը։

Ճաշի ժամանակ Հօյզենդորֆից վերադարձան տան միւս անդամները և հետները Վալենտինից նամակ բերին։ Նա պատկած է Լայբախի հիւանդանոցում։ Չի զրում թէ ինչ է պատահել։ Գրում է միայն իւրայիններին, իրանց տան մասին։ Առաջինը լաց եղաւ Ֆրանցելը, յետոյ Ռոխերլը։ Մայրը անշարժ նստած էր վառարանի մօտ։ Բարբելը ծեռները գոգնոցի վրայ դարսած, իր խոշոր տխուր աչքերով նայում էր պատուհանից։

Սկսում եմ մխիթարել։

—Հիւանդանոց. տեսէք թէ ինչ է պատահել։ Ես երկու անգամ եմ հիւանդանոց եղել. մի անգամ չորս, իսկ միւս անգամ վեց շաբաթ պառկեցի։ Ամեն ինչ կայ այնտեղ, միայն մի քիչ տկար ես զգում քեզ։ Ցաք անկողին են տալիս, միս, բժիշկը այցելում է։ Իբրև իշխանի են քեզ ծառայում։ Ոչ աշխատել է հարկաւոր, ոչ վարժութիւնների պէտք է գնաս, ոչ պատժւում ես, ոչ հայհոյանքներ լսում, և ժամանակը անցնում է այսպէս։ Երբեմն մինչև անգամ հիւանդանոցում ուրախ էլ է

լինում։ Խօսում են, թուղթ են խաղում, հանաքներ անում, ծիծաղում։ Կան հիւանդներ, որոնք առողջանալու վրայ չեն ուրախանում։

Այս անգամ, սիրելի փիլիսոփայ, հալալ վաստակեցի արդանակը։ Ամենքի դէմքերն էլ պարզուեցան։

—Փող չի՞ ուզել,—հարցրեց մայրը։

Նամակը կարդում էր Բոխերլը և հօր ակնարկի համաձայն նամակի վերջին տողի վերաբերմամբ լուռ մնաց։

—Նա դեռ ոչ մի անգամ փող չի ուզել,—ասաց մայրը։

Իսկ նամակի վերջին տողում գրած էր «անգին ծնողներ, խնդրում եմ ուղարկէք ինձ միմիայն երկու դուլդէն»։

Մերը ուզում էր առաջ որդոց հետ խորհրդակցել և յետոյ այնպէս ասել մօրը։

Նախընթաց օրը իմ ներկայութեամբ երեք անգամ եկել են հարկի համար։ Հարկահանը ինչոր հին պարտք էր պահանջում։ Ստիպուած եղան վերջին կոպէկները տալ նրան։ Նա գնաց ասելով, որ եթէ մինչև զատիկ ամբողջ պարտքը չվճարուի, պարտքի մէջ կվերցնի նրանց երկու եզը։ Հարկահանի այցելութիւնից յետոյ Ադամի շնչարգելութիւնն սկսուեց։ Իսկ զինուոր որդու նամակը ուղղակի խոցեց նրա սիրտը։

Բայց նկատեցի, որ Բարբելի դէմքը փայլում է։

—Փող չի՞ հարկաւոր Վալենտինին, հարցրեց նա։

—Զինուորները միշտ փողի կարիք ունեն,—պատասխանեց հայրը։

Մի քանի րոպէից յետոյ աղջիկը իր սենեակից դուրս բերեց գոյնզգոյն թելերով կարած մի քսակ և հանեց նրանից ութը թէ տասը թղթէ դուլդէններ։

—Բարբել, ո՞րտեղից է այսքան փողը, բացականչեց մայրը վախեցած։

—Մոռացե՞լ էք, որ մօրաքոյրս իր կարողութիւնը ինձ է կտակել։ Ախ, Աստուած, որքան գեղեցիկ է նրա խիստ դէմքը խորամանկութեամբ ժպտալու ժամանակ։

—Բայց չէ՞ որ մօրաքրոջից մնացած փողերը ուզում էիր Կայլինի խնայողական դանձարանը տանել։

—Ինչ հարկաւոր է դանձարանը, երբ տանն էլ կարելի է պահել։

Ես նայեցի հանած թղթերին և սարսռացի։ Բոլորն էլ արդէն երկու տարի առաջ դործածութիւնից դուրս եկած թղթեր էին։

Իսկ նրանք ուզում են Վալենտինին ուղարկել։ Ախ, Ադամ, Ադամ։ Երբեմնակի լրագիր կարդալը վատ չէր լինի։

Այժմ խնդրում եմ քեզ, բարեկամս, պատասխանես հետեւեալ հարցերին։ Ձեռը սրտիդ դրած ասա ինձ՝ քաջութիւն կունենայիր դու հասկացնել այս արարածին, որ այնքան ժամանակ խնայողութեամբ քսակի մէջ պահուած դրամները ոչ այլ ինչ են, բայց եթէ հասարակ, բոլորովին անպէտք թղթեր։ Այս վարմունքը աւազակի մեծ ճանապարհին փող յափշտակելու պէս բան կլինէր։

Մօտեցայ սեղանին։

—Լսիր, Բարբել,—ասացի ես,—տուր այստեղ տեսնեմ։ Քո ունեցածը ուրիշ դուլդէն է։ Պոստատանը այդ փողերը չեն ընդունում։ Այժմ դրամը փոխադրում են և պէտք է արծաթի դրամ վճարել։ Այո, աղջիկ, դեռ չդիտես թէ ինչպէս կամակոր է երբեմն փոստը։ Բայց դժուար չէ դործին օդնել. տուր ես փոխեմ քո թղթէ դրամները արծաթի, ինձ աւելի յարմար է թղթէ դրամներ ունենալը...

Կեղծեցի, բայց յոյս ունիմ, որ այս կեղծիքի համար Աստուած թողութիւն կտայ իմ քաղաքի երեքհարիւր մեղքերի և կեղծիքների համար։ Մի անգամ ասացիր, որ բարի մարդկանց հետ յարաբերութիւն ունենալը վարակիչ է։ Համաձայն եմ քեզ հետ։

Դրամը ուղարկուեց նամակով, որտեղ գրուած էր, որ տանը ամեն ինչ առաջուայ պէս է, որ ծնողները, եղբայրները և քոյրը առողջ են, որ բոլորեքեան էլ աղօթում են Վալենտինի և նրա վերադարձի համար։ Վիրաւոր ծեռքի մասին ոչ մի խօսք։

Երբ նամակը գրուեց և բարձրուածայն կարդացուեց, Բարբելը նայեց ինձ։ Կարողացայ արդեօք արտայայտել այն, ինչ նրա մտքումն էր։ Աստուած իմ, մինչև այժմ ոչ ոք այդպէս

լաւ չէ նայել ինձ։ Այսօր մեզ մօտ զարնան սկիզբն է... գարուն, գարուն, գիտնական։

«Կոնտինենտալ փոստ»-ի խմբագրութեան։

Տասնեւերեքերորդ կիրակի

Փոստով ինձ ուղարկած Ձեր ծաղրանքները ոչ մի տպաւորութիւն չեն գործում այլեւս ինձ վրայ։ Զսփազանց դեւեկացել եմ դոցա համար։ Ներեցէք ինձ, որ հանաքը իրողութեան փոխուեցաւ։ Սկսում եմ հասկանալ, թէ ինչ է նշանակում կեանքը և սեպհական քրտինքով ապրելը։

Լրագիրը անհրաժեշտութիւն լինելուց դադարեց ինձ համար։ Եթէ ցանկութիւն ունիք այսուհետև էլ առաքել ինձ, ուղարկեցէք պարոն Դուիդո Վինտերին, Կայլինգի մօտի Հօյզենդորֆի դպրոցի ուսուցչին։ Մեզ մօտ լրագիրը չեն կարողանում տանել, որովհետև այրելու ժամանակ չափից դուրս վատ հոտ է արձակում, ինչպէս ասում է մէկ յարգելի անձնաւորութիւն։

Այժմ այստեղ գետնից սկսում է հողի հոտ գալ, որը ինձ տպագրական թանաքի, կնդրուկի և վառօդի ծուխից յետոյ առասպելական է թւում։

Իմ մասին անհանդիստ մի լինէք. տարուայ վերջին կըստանաք այցելութեան քարտս։ Վերջացնում եմ։

ՀԱՆՍ ՏՐԱՈՒՏԵՆԴՈՐՖԵՐ

Տասնեւչորսերորդ կիրակի

Անցեալ կիրակի յաջողեցայ գրել միմիայն «Կոնտինենտալ փոստ»-ի ծեռնարկողներին։ Զանձրացրին ինձ նրանց թեթեւամիտ սրախօսութիւնները։ Կար ժամանակ, որ ես էլ նրանց նման միբան էի։

Նախորդ կիրակի օրուայ մեծ մասը անցրի մի հին գիրք կարդալով, որը գտայ որդնակեր սնդուկի մէջ։ Մի ծեր ամուրի մարդու երկրի և նրա պատմութեան նկարագրութիւն է։ Սորանով ժանօթացայ նախահայրերիս հետ, որոնցից մէկին Հոհենշտաուֆէնների ժամանակ, Աուգսբուրգում չորս մաս են

արել։ Մտածել են, արդեօք, մի վայրկեան նախահայրերս, որոնք արչի միս էին ուտում, որ կգայ ժամանակ, երբ նրանց յաջորդները սիսեռի ջրալի ապուր կուտեն։

Իսկապէս ասած, դեռ ոչ մի անգամ չէի փորձել, թէ ինչ ասել է պաս բռնելը և երբէք չեմ էլ մտածել դորա մասին, թէպէտև ամէն օրացոյցի մէջ նշանակած կայ քառասնօրեայ պասը։ Այժմ արդէն ստիպուած էի պաս պահել։ Առաջ ամէն օր սիսեռի արգանակ էին տալիս, իսկ այժմ ջրալի կերակուրներ, պասուայ միակ համեմունք՝ սոխով։ Բարեսիրտ Ադամ։ Եթէ պաս օրերին մտնէր բարձրաստիճան հոգևորականների խոհանոցը։

Այնքան լղարել եմ, որ Բարբելը արդէն բաճկոնս նեղացրել է. սակայն ես ամենևին ոյժի սպառումն կամ ինքնազգացողութեան թուլութիւն չեմ զգում։ Զէ՞ որ քաղաքումն էլ են գովում չափաւորութիւնը, լաւ օդը և մարմնական աշխատանքը։ Բայց այնտեղ միայն ասում են, բայց չեն կատարում։ Մատներիս կոշտերը վաղուց արդէն դադարել են ցաւելուց։ Քաղաքի կօշիկների փոխարէն հագնում եմ Վալենտինի երկար կօշիկները, որը մեծ չլինելու համար լցնում եմ դարմանով։ Մնացեալ հագուստներն էլ տալիս են։ Իմ զգեստս պահում եմ, յուսալով նրանով կրկին ծեր մէջ երևալ։

Մի քանի օր առաջ, սիրելի դիտնական, պատիւ ունեցայ վերջապէս քերել աղբի կոյտը։ Աղբը սահնակներով տանում ենք դաշտ։ Գիւղում ծիւնը երթևեկութեանը ամենևին չի խանգարում. աւելի շուտ թեթևացնում է այդ։ Սկզբում բաւական քաշւում էի այդ աշխատանքից։ Ոչինչ բան այնպէս ահ չէր ներշնչում ինձ, որքան դուրթի աղբակոյտը։ Սակայն ոչ մէկը չի դարշում նրանից։ Երբ առաջին անգամ պէտք է աղբի մէջ եղանը իջեցնէի, նոյն զգացմունքը ունեցայ, երևի, ինչ որ ղինուորը առաջին անգամ կրակի մէջ դնալիս։ Չի կարելի հերքել, որ աղբի կոյտը ուժեղ հոտ ունի, կարելի է ասել, նոյնիսկ, կծու հոտ ունի։ Թէպէտ քաղաքում աւելի վատ բուրմունքներ էլ են լինում։ Գիտէս այդ հոտը ինչ յիշեցրեց ինձ։ Ճաշկերոյթից յետոյ նուրբ պանիրները։ Տանտէրս ժպտում է հողի չաղ շերտե-

ը դիտելիս, որից գոլորշի է բարձրանում։ Եթէ լաւ եղանակ լինի, հացը կրժլի։ Սկզբում աղբի սև կոյտերը կէտերի նման են երևում դաշտի վրայ։ Գալիս է Բարբելը ու եղանով շաղ տալիս պարարտութիւնը։ Հին բանաստեղծները կասէին՝ ծաղիկներ է սփռում. ինձ թւում է թէ պտուղներ է ցանում։ Բայց այդ մենք օդոստոսին կտեսնենք։

Բարի Ադամը մտախոհութեամբ նայում է, թէ ինչպէս են դաշտը պարարտացնում և ցաւոր ասում. Թող Տիրոջ կամքը լինի։

Այս բառերը հրաշքների աշխարհում ապրող ամեն մի գիւղացու բերանին պատրաստ է։ Տարին երեքհարիւր վաթսուն և հինգ օր ունի. սակայն ինչո՞ւ չեն կատարւում այդ ժամանակամիջոցին։ Երբեմն բոլորովին անհաւատալի բաներ են տեղի ունենում։ Գիշերը տասնևվեց ժամ է տևում. իսկ մի քանի ամսից յետոյ ցերեկն է տասնևվեց ժամ տևում։ Եւ այդ գիշերուայ և այդպիսի ցերեկուայ ժամանակամիջոցում զարգանում են սաղմերը, ամեն ինչ ծաղկում է, շքեղ հասունանում, յետոյ թառամում և չորանում մահուան գրկում։ Ի՞նչ երկար ժամանակ տեսնում ենք գեղեցիկ կանաչը, որքան ժամանակ սպասում ենք պտղի և այս ամենը կատարւում է կարճատև տարուայ ժամանակամիջոցին։

Այժմ երեկոները լսելի են լինում թէ ինչպէս աղմուկով են թափւում ծիւնի հիւսքերը։ Բարձր սարերին ծեան շերտի տակ հաւաքւում են ջրերը և պղտոր առուակներով ցած թափւում, տանելով իր հետ ծիւնը և սառոյցը։ Սարերը պարզ և որոշակի նկատելի են խոնաւ օդի միջից և նրանց գագաթներին տաք քամի է փչում։ Հովիտներում խոտը երևի արդէն կանաչել է... իսկ ձեզ մօտ սկսուել են նուագահանդէսները, որտեղ կանայք հովհարներով ծածկում են իրանց ծանծրացող դէմքերը։ Այդեպանները մաքրում և կարատում են ծառաստանները. քամին քաղաքի փոշին է բարձրացնում. դերձակները մի որևէ նոր յիմար ձևի գարնանային զգեստներ են պատրաստում... յիմարութիւնը ոչ մի տեղ այնքան յիմար չի թւում, որքան սրտին մօտիկ բնութեան մէջ։

Տասնեհինգերորդ կիրակի

Անցած կիրակի մօր և հօր միջև վէճ ծագեց։

Ասում են թէ շատ սակաւ է պատահում այդ։ որովհետև, ինչպէս Բոխերին է ասում, «մայրը այն է անում ինչ որ հայրն է ուզում և հայրը նոյնպէս է վարւում ինչպէս մայրն է ցանկանում»։ Թէպէտ այս անգամ արդարութիւնը մօր կողմն էր, բայց հայրը պնդեց իր ասածի վրայ և, օգտուելով հանգամանքից, յաղթող հանդիսացաւ։

Խնդիրն ահա թէ ինչումն էր։ Մեր հարևան Շրագերերի և Կուլմբոկի հետ միասին հովտից երկու գիւղացիք եկան մեզ մօտ։ Կէս օրին այնպիսի հանդիսաւոր կերպով մտան խրճիթը, որ նոյնիսկ վախեցանք։ Ուզում էին Ադամ Վէյլերին Լանդտագի ներկայացուցիչ ընտրել։ Կրնդունի, արդեօք, այդ առաջարկը. հարցրեց Կուլմբոկը։

Սկզբում Ադամը բան չէր հասկանում, քիչ յետոյ լրջօրէն հարցրեց։

—Ի՞նչ էք ասում։ Լանդտագի ներկայացուցիչը պէտք է լինիմ ես։ Բայց ես անպատրաստ եմ այդ գործի համար։ Ես ոչինչ չ'գիտեմ և Կայլինգից դուրս ոչ մի տեղ չեմ եղել։ Ես չեմ էլ հասկանում թէ մարդիկ աշխարհիս երեսին ինչ են անում։ Երևի ծաղրում էք ինձ։

—Հենց այդ պատճառով էլ քեզ ենք ընտրում, բացականչեց Շրագերերը։—Նրա համար, որ ուրիշների հետ ոչ մի գործ չունես և աւանդական սովորութիւններին հետևող ես. հենց դորա համար էլ հարկաւոր ես մեզ։ Մենք չենք ուզում ուղարկել այնպիսի մարդիկ, որոնք քաղաքականութեան մասին խօսել գիտեն, չենք ուզում ուղարկել հարուստ գիւղացի, որ կալուածատէրերի հետ չմիանայ։ Մեր ցանկութիւնն է ընտրել տեղացի, ծեր գիւղացուն, որը հին սովորութիւնները և հին տնտեսութիւնը կուզենայ պահպանել։ Մեր դաշտերը և մարգագետինները անփոփոխ են մնում. մենք պէտք է մեր ամառուայ և մեր ձմեռուայ համեմատ ապրենք։ Մենք գործ չունենք այլ երկրների եղանակների հետ։ Ադամ, դու պէտք է ինքդ վարձուորի նման աշխատես, գեղջուկի կարիքները լաւ ես հասկանում և բացի

տնտեսութիւնից ոչնչի մասին չես մտածում։ Ահա թէ ինչի համար ընտրեցինք քեզ, Ադամ։

Ադամը լուռ էր։

—Ծանր կլինի քեզ համար, Ադամ,— միջամտեց Կուլմբոկը,—որովհետև դու բարի մարդ ես, չափազանց բարի, իսկ լանդտադում պէտք է՝ կայծքարի նման պինդ լինել... քո բացակայութեան ժամանակ տան մասին էլ պէտք է հոգ տանես...

—Հարևան, կարծես ուզում ես նրա միտքը փոխել։—Մի մտածի, Ադամ, թէ տան գործերը չի կարելի մի քանի շաբաթ թողնել։ Ամեն պատգամաւոր որոշ վարձատրութիւն է ստանում. կարող ես լաւ տնտես վարձել և դեռ մի բան էլ քեզ համար խնայել։ Ամենիս բարիք արած կլինիս, եթէ համաձայնես։ Մենք հաւատում ենք քեզ, ամբողջ շրջակայքն ասում է, որ Ադամից լաւը չկայ։ Համաձայնիր, Ադամ։

—Համաձայնիր, Ադամ։ Աւելացրեց Կուլմբոկը. բազմաթիւ ծայներ կստանաս... ամենքին կյորդորեմ...

Այս անգամ Ադամը ծանրութեամբ բարձրացաւ, դարձաւ պատի կողմը և ասաց.—ես ոչինչ չեմ կարող ասել։

—Ուրեմն համաձայն ես։

—Ո՛չ, սատանան տանի քեզ։

—Կտրականապէս. դեռ վիրաւորւում էլ է։

—Վիրաւորւում եմ։ Ինչի՞ համար նեղանամ։ Ես պէտք է ուրախ լինիմ։ Բայց ես ուրախ չեմ և կեանքումս երբէք ուրախանալու էլ չեմ։

Նստեց վառարանի մօտ փայտի կտորի վրայ և սկսեց ծանրը շնչել։

—Աստուած իմ, դարձեալ այս շնչարգելութիւնը։ Երբ տաքանում է միշտ այսպէս է լինում, ասաց պառաւը։ Ցեռոյ դարձաւ եկողներին։

— Այս բոպէիս հո չէ՞ հարկաւոր սրա համաձայնութիւնը։ Մի երկու օր ժամանակ տուէք։ Թող մտածի։ Այնպէս չէ՞, ծերուկ, կմտածես։

Բայց ծերունին ոչինչ չէր լսում և ծանր շնչում էր գիւ-

դացիները գնացին, խոստանալով երկու օրից վերադառնալ։

Երբ ժուխը ներշնչելուց յետոյ շնչարգելութիւնը անցաւ, մայրը սկսեց նախապատրաստել նրան։

—Այսպիսի առաջարկից հրաժարուելու համար փալասի կտոր պէտք է լինել, ասաց նա։

—Ի հարկէ լաւ կլիներ եթէ համաձայնուէի։ Հօ չէս կարող, երբ շնչարգելութիւնս սկսուի, շարունակ ժխով կողքիս կանգնած լինել։

—Ասենք յուզուելու այնքան բան էլ չես ունենայ։ Ինչպէս ասում են, շատերը ամբողջ շաբաթներով նստած են լինում համրերի նման...

—Ինչպէս չէ, հանդիստ նստած կլինես, երբ այն ամենը՝ ինչ որ խօսում, են քո սրտովը չլինի։ Միշտ նոր-նոր բաներ են հնարում, որից մենք, գիւղացիներս, քանդւում ենք։ Առողջն էլ չի ուզենայ խօսել։

—Ուրեմն նստիր քեզ համար, դրամը միևնոյն է կվճարեն։

Նա խիստ և սուր հայեացքով նայեց կնոջը։

Իսկ պառաւը ասաց աւելի մեղմ.

—Ով զաւակներ ունի, չպէտք է արհամարհէ դրամը։ Բաւեի այս օգտակար կապեր էլ կարելի է հաստատել։ Մտածիր, չէ՞ր կարելի արդեօք Լանդտագում Վալենտինի համար մի բան սարքել. ինչպէս և Ֆրանցելի համար։ Ցաւիտեան այստեղ մնալու հօ չէ՞։

—Սակայն ո՞ւր պիտի գնայ։ Մենք հնուց արդէն այստեղ ենք ապրում։

—Բայց մի այլ տեղ կարող է նրա համար աւելի լաւ լինել։

—Նա պէտք է մնայ այստեղ. բացականչեց Դրամը. իսկ դու դադարիր չիմար խօսքեր ասելուց։ Չեմ ուզում թոյլ տալ, որ իմ անձնական շահի համար ընտրեն ինձ։

—Մի՞ Աստուած. Ուրիշները կերթան իրանց շահերի համար։ Այդ պատճառով էլ նստած են Լանդտագում։

—Խօսքերս մի խեղաթիւրի, կնիկ։ Այլ բան է դատակարդի օգուտը փնտրել և այլ՝ անձնականը։ Ճշմարիտ չէ՞։

Ցուղմունքից ամբողջովին դողում էր։ սկսեց առաջուանից աւելի շնչասպառ լինել։

Մայրը հանդարտ ինչ որ շինում էր վառարանի մօտ։ Երբ ծերունուն ծուխը մօտեցրին, նա երկար ժամանակ չէր կարողանում շնչել։ Ճակատի ջղերը սարսափելի ուռել էին, շրթունքները դողում և աչքերը չուել էր։

— Տէր Յիսուս։ Բոխերլ, կանչեց պառաւը։ Տղան երկիւղից վերցրեց մոմը և սկսեց վառել։ Բարբելը վազեց ջրհորը և ջուր տուեց խմելու անդադար կրկնելով՝ հայր, հայր, հայր։ Ծերը շօշափեց աղջկայ ձեռքը և սեղմեց. ո՜հ, զաւակս։ Աննկարագրելի թախծութեամբ նայում էր դստեր և նրա աչքերի թերթերունքներից արտասուքի կաթիլներ էին կախուած։

— Դու, դու իմ սիրելի զաւակն ես, ասաց նա վերջապէս, խորը շունչ քաշելով։ Նա թեթեւութիւն զգաց։

Այդ ժամանակից սկսած մայրը Լանդտագի ընտրութիւնների մասին այլևս ոչինչ չէր խօսում։ Երկու օրից յետոյ եկաւ Կուլմբօկը։ Պառաւը խորհուրդ տուեց նոյնիսկ չսկսել այդ խօսակցութիւնը։ Կուլմբօկը հպարտութեամբ հեռացաւ, յուսալով, թէ Ադամը իր ծայնը հարևանին կտայ, եթէ իհարկէ նրանցից մէկին ընտրելիս լինէն։

— Յիշում ես արդեօք ծաղկազարդի մասին մեր դպրոցական ժամանակներից։ Թէ ինչպէս Տէրը արմաւենու ճիւղը ձեռին, աւանակի վրայ նստած մտաւ Երուսաղէմ։ Այսօր մի մեծ փունջ ուռենու ճիւղերից ձեռքս Հոյդենդորֆ եկայ։ Սա այստեղ ծաղկազարդի էշ լինել է նշանակում։ Ամեն տանից ժողովուեցին մի մի երիտասարդ ճիւղերը ձեռին և քահանան այդ ճիւղերը օրհնում էր եկեղեցում։ Ժամերգութիւնը խորհրդաւոր կերպով ներկայացնում է կատակարանի մէջ ասածները։ Այս տեսակ պարագաներին մարդու սիրտը բարեպաշտութեան նման մի բան է ներս սպրդում։ Մի անդամ ասել ես, որ եօթանասուն տարի ապրելուց յետոյ, մարդը սովորում է Աստծուն ճանաչել։ Իսկ գիւղական վարծուորը աւելի շուտ է հասկանում նրան, հաւատացնում եմ քեզ. քաղաքի եկեղեցիներում ես բոլորովին անտարբեր եմ մնում, գիւղական եկեղեցում երկար կանգնել էլ չես

կարող, ակամայ չոքում ես. շուրջդ աղօթում են բարեպաշտ մարդիկ և դու զգում ես, որ նրանց հետ միասին մի ամբողջութիւն ես կազմում... եթէ գիտենաս թէ այս աղքատ, հոգսերով լի, վիրաւոր մարդիկ ինչպիսի եռանդուն կերպով հետևում են աստուածպաշտութեան սրբազան խորհուրդներին։ Բարեպաշտութիւնը երբէք էլ «հնացած բան» չէ, ինչպէս ոմանք կարծում են։ Բարեպաշտութիւնը-բնութիւնն է. նա կապուած է մարդու հետ և ինչպէս սէրն ու ատելութիւնը՝ մարդու յատկանիշն է կազմում։

Այսօր ժամերգութիւնից յետոյ, ճիւղերը բաժանելիս, ուսուցիչը, չգիտեմ ինչու, Բարբելի մօտից անցաւ առանց կանգ առնելու, իսկ նա երեսը շուռ տուեց և նոյնիսկ չնայեց ուսուցչի կողմը։ Նկատել եմ, որ աղջիկը այլևս կարդալու դրքեր չի վերցնում նրանից։ Դէպի ինձ ուսուցիչը միատեսակ չէ լինում տրամադրուած։ Երբեմն կարծես խռոված է լինում, իսկ այսօր մի գեղեցիկ ճիւղ ընծայեց։ Օրհնած ճիւղերի փունջը տանտիկինը պահեց. ասում են նրա մէջ այնպիսի ոյժ է ծածկուած, որը կարողանում է ամառը ամպի գոռոցները հանդարտեցնել։

—Պահեմ արդե՞օք իմ ճիւղը։ Մի՞թէ սոքա մարաիրոսութեան նամակներ են արդէն. կամ այս ճիւղը կպահպանի ինձ չար ոյժից։ Ախ, Բարբել։ Ի՞նչ կլինի, երբ ամառը երկնքի վրայ կայծակներ փայլատակեն։

Մարդկային սիրաը, բարեկամս, որպէս փոքրիկ կարմիր նրաբ, խաւար միջնադարից ողջոյն է ուղարկում քեզ։

Թարգմ. ՕՐ. ՆՈՒԱՐԴ ԱՂԱՆԵԱՆՑ

(Կը շարունակուի)

ՏԷՐ-ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆՑԸ [1]

Գլուխ ԺԲ.

Ս. Պետերբուրգում Պատկանեանցը մնում է 1863-ի օգոստից մինչև իւր մահը — 1889 թուի Ապրիլի 13-ը, այսինքն համարեա թէ 26 տարի։ Նորա Պետերբուրգի փոխադրուելը լինում է, ինչպէս ասացինք, իւր բարեկամների ջանքով, նամանաւանդ Նալբանդեանցի, որ թէև իշխանաւորների շրջանում ազդեցութիւն չունէր, բայց կապեր ունէր, բարեկամութիւն էր հաստատել այնպիսի մարդկանց հետ, որոնց ձայնը լսելի էր դիրք ունեցող անձանց ականջին, որոնց խօսքը անցուկ էր բարձր շրջաններում։ Նա բուռն սիրով սիրում էր իւր վարժապետին, յարգում էր նորա գիտութիւնը, համակրում էր նորա գործունէութեան և հպարտանալով իրան կոչում էր, նամանաւանդ առաջին ժամանակները, աշակերտ Պատկանեանցի և. ստորագրում էր իւր գրուածների տակ «Մ. Նալբանդեանց յաշակերտութենէ Տէր-Գաբրիէլ Պատկանեանցի»։ Եռանդուն, աչքաբաց, կենդանի, նա ամեն տեղ մտնում էր, ամենի հետ խօսում էր, շատերի հետ գրագրութիւն էր անում և իւր այդ կրակոտ գործունէութեան մէջ երբէք չէր մոռանում իւր «վարժապետի գործը»։ Մերսկուտի դատավճռի փոխելը հէնց պէտք է վերագրել մայրաքաղաքի հայ մեծամեծների ազդեցութեան, որոնց շարժել, գործել տալու մեքենայի գլխաւոր շարժերակը դտնուում էր իշխանաւորութեան տեսակէտից աննշան Նալբանդեանցի ձեռքին։

---

[1]) *Լումայ 1909 № 3.*

Պատկանեանցն էլ փոխադարձաբար սիրում էր Նալբանդեանցին և համարում էր նորան արդիւնարար զաւակ Նախիջևանի և ամբողջ Հայոց ազգի, որի շահերին նա անձնատուր էր, բայց չէր հաւանում նորա յեղափոխական գործունէութեան, որով նա վտանգի մէջ էր ձգել ոչ միայն իրան, այլ և իւր մեկենաս Հայրապետեանցին. նորա գործունէութիւնը Պատկանեանցի աչքին ոչ ազգասիրական և ոչ հայրենասիրական էր երևում. նա կարծում էր, որ նա շեղուել է ուղիղ ճանապարհից և ցաւալի վախճան է գտել, կամենալով դլխով բանալ ճանապարհ ապառաժի մէջ։ Պատկանեանցը նորա կալանաւորուելը և բանտարկուելը համարում էր Այվազեանի և Խալիբեանի ձեռքի գործը, որոնք մատնել էին նորան տէրութեան ձեռքը, ասելով, որ նա խառն է Լեհաստանի վերջին ապստամբութեան գործի մէջ։ Ճիշտ է, նորա թղթերը, որոնք ընկել էին իշխանութեան ձեռքը, շատ էլ անարատ ու մաքուր չէին, բայց նորա թէև հանճարեղ, բայց յանդուգն գրիչը ամենամեծ զէնքն էր նորա հակառակորդների ձեռքին, որով նոքա հեշտութեամբ յաջողում էին խոցել նորա սիրտը։ Պատկանեանցի աչքին Նալբանդեանցը մի նիհիլիստ էր, կամ, ինչպէս ինքն ասում է, մի չնչահաւատ, և այդ նիհիլիստական ուղղութիւնը նա ստացել էր ոչ արտասահմանում օտար երիտասարդներից, ինչպէս որ կարծուում է, այլ Մոսկուայում իւր ուսանողութեան, և Լազարեան ճեմարանում վարժապետութիւն անելու ժամանակները և զարգացրել ու արմատացրել էր իւր մէջ այդ ուսմունքը, նամանաւանդ գործակցելով Հիւսիսափայլին և ծանօթութիւն անելով Ս. Նազարեանցի հետ։ Այդ դաղափարով էլ նա գնացել էր Ս, Էջմիածին և ճանապարհորդել էր Լոնդոն, Պարիզ, Պոլիս և Հնդկաստան և ճանապարհին պատահել էր մի քանի չնչահաւատ Հայերի, որոնց հետ ծանօթացել էր դեռ Ռուսաստանի մայրաքաղաքներում, և խրախուսութիւն գտել նոցա «խօթամիտ» խօսքերից։ Այդ բոլորի հետևանքը եղել էր այն, որ խեղճը կարծել էր, թէ ինքն ինչպէս Պարիզի Սիտիի մէջ քաջ է, այնպէս էլ կենցաղագիտութեան մէջ անսխալ. նա Եղիշէի մէջ սեփականելով իրան Վարդանի անձնուրացութիւնը

և Փարպեցու մէջ Վահանի անձնուիրութիւնը, բռնել էր այն ընթացքը, ընկել էր այն ճանապարհը, որ միայն շրջմոլիկ արկածախնդիրները կարող են ճանապարհ համարել դէպի փառքի տաճարը։

Պատկանեանցը Նալբանդեանցի Կարապետ Հայրապետեանցին մօտենալու պատճառը, բացի ուրիշ հանգամանքներից, համարում էր և անձնական շահը, նորանից փող կորզելու, ռոճիկ ստանալու շարժառիթը։ Եւ այդ նպատակին հասնելու համար նա, քահանայի ասելով, գործ էր դրել ամենասոյգ միջոցը և՝ ընտրել էր ամենամօտ ու անվրէպ ճանապարհը. նա աշխատել էր ամեն ծեռքից եկած միջոցներով արժարժել նորա մէջ փառասիրական կայծը, քաջ տեղեակ լինելով, որ եթէ մի անգամ բորբոքուեց այդ հարուստ մարդու մէջ կրակը, հրդեհ կառաջանայ և այլևս դժուարութեամբ կհանգչի։ Հայրապետեանցը աշակերտել էր Լազարեան ճեմարանի աշակերտ Թէոդորոս Խադամեանին, որ իւր աշակերտների համար սովորութիւն է ունեցել բարեկենդանին զանազան ներկայացումներ սարքելու և այդ նպատակով գրել է զանազան պատմական ողբերգութիւններ, որոնց մէջ յայտնի է եղել նորա շարադրած Վարդան Մամիկոնեանի եղերերգութիւնը, որի մէջ Վարդանի դերը կատարել է Հայրապետեանը և չափազանց յափշտակուել Եղիշէի հերոսի նահատակութեան հանգամանքներով։ Ահա՛ նորա այդ թոյլ երակի վերայ սիրել է խաղալ Նալբանդեանցը և ազդասիրութեան պատրուակի տակ, գրգռել ու յարուցել է նորա մէջ փառասիրութիւնը։ Այս բոլորը ապացոյց տալու համար, Պատկանեանցը պատմում է մի դէպք, որի ճշմարտութիւնը թողնում ենք նորա պատասխանատուութեան։ Երբ նա դեռ նոր միայն դուրս է եկած լինում բանտից, ստանում է նամակներ Թիֆլիզից ու ս. Էջմիածնից, որոնց մէջ տեղեկութիւններ են լինում Այվազեանի և Խալիբեանի թևակոխութիւնների մասին հնդկաց հրիտակների վերաբերմամբ. նա այդ նամակները տանում, կարդում է Հայրապետեանցին, որ հետաքրքրուում էր և միտք ունէր շուտով յարուցանելու հրիտակների խնդիրը։ Հէնց այդ ժամանակն էլ ստացուում է Նալբանդեանից մի նամակ, որի մէջ «այն

շողոքորթը պանրի ակնկալութեամբ նորա քաղցրիկ դայլայլիկն ներբողելով, կը ակնարկէր նորա եղերեղութեան մէջ Քաջ Վարդանի դերն»։ Հայրապետեանցը այնպէս զմայլու�մ է նամակի խօսքերից, որ սուրբ Հոգուց ազդուած մարգարէութիւն է համարում նրան ու այնպէս է ցոյց տալիս, որ ինքը պատրաստ է Վարդանի նման նահատակուել Նախիջևանում։ Պատկանեանցը հարցնում է, թէ այդ նամակից երևում է, որ Նալբանդեանցը ժեզանից ամսական ռոճիկ է ստանում. Հայրապետեանը ծիծաղում է և պատասխանում. «Ի՞նչպէս իմացար. ճշմարիտ է, ես նորան ամիսը հարիւր բուբլի եմ նուիրում»։

Վերջերում, ինչպէս յայտնի է, Հայրապետեանը մասամբ իրագործում է Նախիջևանում Վարդանի պէս նահատակուելու իւր ցոյց տուած յօժարութիւնը. նա եթէ չի նահատակուում խօսքիս բուն նշանակութեամբ, գոնէ, մեծամեծ նեղութիւններ է քաշում, ենթարկուելով մատնողութեան և ամբաստանուելով տէրութեան առաջ իբրև քաղաքական յանցաւոր այն բանի համար, որ նա փոխադրել էր Նալբանդեանցի մարմինը Նախիջևան և մեծ հանդիսով յուղարկաւորել էր նորան։ Տէր-Եղիա Շապոչնիկեանի, Խալիբեանի և Այվազեանի ջանքով քննութիւն է բացուում և սկսուում հետաքրքրութիւն, թէ արդեօք ճշմարիտ է, որ Հայրապետեանը կամեցել է Նալբանդեանցի մահը ներկայացնել իբրև ճշմարտութեան մարտիրոսի վախճան և որ նա նահատակուել է ազգասիրական սխրագործութեան հանդիսի մէջ։ Հարուածը այնքան մեծ է լինում քաղաքագլխի համար, որ նա տուժում է բարոյապէս, կորցնելով իւր առողջութիւնը, և նիւթականապէս, զրկուելով իւր հարստութեան մի խոշոր մասից։ Եւ այսպէս Նալբանդեանցի յարաբերութիւնը Հայրապետեանցի հետ անդիտակցաբար դառնում է վերջինիս համար չարիք և պատճառ Հայրապետեան տան կործանուելուն։ Եւ առ հասարակ Նալբանդեանցի սխալ ուղղութիւնից ու գործունէութիւնից, Պատկանեանցի կարծիքով, առաջ է գալիս բազմաթիւ վնասներ Նախիջևանի հասարակութեան համար. եթէ չլինէր Նալբանդեանցը, չէր բորբոքուիլ Մատթէոս առաջնորդի և հասարակութեան մէջ եկեղեցական գումարների կռիւը, 3 հարիւր

յիսուն հազարի մեծ ճոխութիւնը չէր ընկնիլ Այվազեանի ձեռքը, Խալիբեանի ճակատին չէր դրոշմուիլ իբրև աղուէսազրոշմ եկեղեցական փողերի դոլի անուն և ոչ էլ այն գումարներով կառուցուած մեծ դպրոցը կշինուէր Թէոդոսիայում և կկրէր «Խալիբեան» յորջորջումը։

Նալբանդեանցի հիւանդութիւնը, Պատկանեանցի ասելով, ժառանգական «ծիւրախտ» էր և «ափրոդիտեան խօթութիւն» որ նա ստացել էր 1851 թուին և չէր կարողացել բոլորովին բժշկուել և այդ դէշ հիւանդութեան թոյնը մաքրել իւր երակներից «փայլածուի» օգնութեամբ։ Եւ զարգացել էր նորա մէջ այդ հիւանդութիւնը Պետրոս-Պօղոս բերդի խոնաւ խուցերում և բանտի խստակեաց ռէժիմի ազդեցութեան ներքոյ։ Ճիշտ է, բազմամեայ բանտարդելութիւնից յետոյ, նա ազատուել էր ու տեղափոխուել Վօլգայի ափը, բայց արդէն ուշ էր... Եւ կրտրուում է նորա կեանքի թելը դեռ երիտասարդ հասակում և իշնում է նա գերեզման, առանց իրագործելու այն բոլորը, ինչ որ նա կարող էր անել, ինչ որ ուզում էր....

Ո՞րքան ճշմարիտ է Պատկանեանցի այդ կարծիքը Նալբանդեանցի մասին։ Որ Պատկանեանցը սիրում էր Նալբանդեանցին և ճանաչում էր նորա արժանաւորութիւնը, այդ մասին խօսք չի կարող լինել. նա նորան համարում էր արդիւնաբար ղաւակ ազգի և անծնաւոր նորա շահերին. նա նորա գրիչը համարում էր թէև յանդուգն, բայց հանճարեղ. նա միայն չէր հասկանում նորա բռնած ուղղութիւնը և իբրև հին մարդ չէր էլ կարող հասկանալ, ուստի և կոչում էր նորա գործունէութիւնը ոչ ազգասիրական և ոչ հայրենասիրական։ Տէրութեան օրէնքները, սարք ու կարգը և ամբողջ կազմակերպութիւնը նորա համար սուրբ էին և անբիծ, ուստի և ամէն մէկը, որ հակառակ էր գնում այդ բոլորին, նորա աչքին շեղուած էր ուղիղ ճանապարհից և նիհիլիստ էր կամ չնչահաւատ։ Գերցենը, Բակունինը և դոցա բոլոր համախոհները, որոնք ազնաւական լինելով տիրող սարք ու կարգից, հեռացել էին իւրեանց երկրից և արտասահմանում գործում էին իւրեանց հայրենիքի շահերի համար, միանգամայն օտար էին ու անծանօթ նորան և

մինչև իսկ վնասակար, ուստի և Նալբանդեանցի գործունէութիւնը, որ բոլորովին համապատասխան էր նոցա ուղղութեան, նորան միանգամայն ապարդիւն ու անհասկանալի էր թուում. նորա կարծիքով հայ ազգասէրը և հայրենասէրը պէտք է անպատճառ կամ քահանայ լինէր, կամ վարդապետ, կամ վարժապետ և կամ ազգասիրական բաներ գրող. նա չէր հասկանում, որ հայութեան մի ստուար մասի բաղդը անխզելիօրէն կապուած է բովանդակ պետութեան, ընդհանուր հայրենիքի շահերի հետ. որքան որ ընդհանուրը լաւ է, օրինական է, բարեկարգ է, այնքան և նորա մասերը բաղդաւոր են և ընդհակառակը, ուրեմն և Գերցենը, Բակունինը և միւսները, որոնց թուին պատկանում էր և Նալբանդեանցը, որոնք աշխատում էին ընդհանուր հայրենիքի այդ բարելաւութեան համար, նոյնքան ազգասէր և հայրենասէր էին, որքան ինքը և իւր նմանները, նամանաւանդ որ Նալբանդեանցը մասնաւորապէս և յատկապէս գործում էր և հայերի համար, քարոզելով, գրելով, ազգային գործերին եռանդուն կերպով մասնակցելով, և այլն և այլն։ (16)։

Պատկանեանցը չարաչար սխալուում է, երբ կոչում է Նալբանդեանցին «շողոքորթ» և շահասիրական նպատակով Հայրապետեանցին մօտեցող։ Նալբանդեանցը ոչ շողոքորթ էր և ոչ շահասէր. երկու կուսակցութիւն Նախիջևանում մաքառում էին միմեանց հետ, և Նալբանդեանցը իբրև այդ կուսակցութիւններից մէկին պատկանող և գլխաւոր աշխատող բնականապէս ճգնում էր իւր կուսակցութիւնը հզօրացնել և այդ նպատակով աշխատում էր մօտենալ հարուստ և Նախիջևանում դիրք ունեցող Հայրապետեանցին, որ կարողանայ նորան իւր կուսակցութեան գլուխ կանգնեցնել իբրև Խալիբեանցին դերակշռող ոյժ և արժանաւոր հակառակորդ։ Այդտեղ անձնական շահասիրութեան բան չկար, այդտեղ պանրի ակնկալութիւն, որի համար արժենար աղուէսին ագռաւի «դայլայլիկը» ներբողել, տեղի չունէր, այդտեղ կուսակցական տակտիկայի գործ էր միայն, ուրիշ ոչինչ։ Իսկ ինչ որ վերաբերում է ամսական հարիւր բուբլի ստանալու խնդրին, մենք պէտք է ասենք, որ, նախ և առաջ, մեզ յայտնի չէ, որ Նալբանդեանցը երկար ժամանակ

և կանոնաւորապէս Հայրապետեանից ամսական ստացած լինի, երկրորդ, որ եթէ ստացած էլ լինի, այդ մի ամօթ բան չէ։ Նալբանդեանցը պաշտօն չունէր, նա կարողութեան տէր չէր. նա գրում էր, նա քարոզում էր, կարելի է ասել, որ ամբողջ կուսակցութեան գործը նա մենակ իւր ուսերի վերայ էր տանում. ի՞նչ զարմանք, ուրեմն, որ այդ կուսակցութիւնը իւր հարուստ պարագլխի միջոցով նիւթականապէս երբեմն օգնէր նորան, տալով ապրելու միջոց, ճանապարհածախսի փող, և այլն։

Միակ կէտը, որի վերաբերմամբ, գուցէ, մեղ պէտք լինի մասամբ համաձայնել Պատկանեանցի հետ, այդ այն է, որ Նալբանդեանցը իւր չափազանց կտրուկութեամբ և կուսակցական կրքոտ գործունէութեամբ ոչ այնքան օգուտ բերեց Նախիջևանի հասարակութեան, որքան վնաս։ Այն ժամանակները ոչ թէ միայն Նախիջևանի հասարակութիւնը, այլ և ամբողջ հայութիւնը դեռ այնքան հասունացած չէր, որ կարելի լինէր ամեն բան տեղնուս տեղը, կտրուկութեամբ և արդարութեան և օրէնքի հիման վերայ որոշել, պէտք էր մի փոքր զգոյշ լինել։ մի փոքր ներողամիտ լինել, որ հասարակաց շահերը իսպառ չվնասուէին, որ յօնքը շիտակելու տեղ աչքն էլ չհանուէր։ Պէտք էր մոռանալ, որ դէմ-յանդիման կանգնած մարդիկը ուրիշ տեսակ էին մեծացել, ուրիշ տեսակ դաղափարներ ու հասկացողութիւններ էին ժառանգել իրենց հայրերից, անցեալ սերնդից, ուստի և չպէտք է կարողանային, չպէտք է ուղենային համակերպել եղած պահանջներին, այլ, ընդհակառակը, տեսնելով դիմադրութիւն ու արգելք իւրեանց առաջ, աւելի ևս պիտի դրդուէին և դիմադրութեան համար գործ դնէին անխտիր թէ թոյլատրելի և թէ ոչ թոյլատրելի միջոցներ, որով և չարաչար վնասէին հասարակաց շահերին, ինչպէս որ եղաւ էլ։ Մատթէոս Վեհապետեանի դիմադրութիւնը Ներսէս կաթողիկոսին, որի մէջ անմասն չէր և Նալբանդեանցը, ի՞նչ հետևանք ունեցաւ, բացի նորանից, որ կաթողիկոսական իշխանութիւնը նուաստացրեց տէրութեան առաջ, եկեղեցական գումարների հաշուետուութեան խնդիրը, որ յարուցել էր Նալբանդեանցը, ի՞նչ օգուտ ունեցաւ, բացի նորանից, որ Խալիբից ոչինչ չստացուեց, ստա-

ցուածն էլ ապարդիւն կերպով ծախսուեց Թէոդոսիայի դպրոցի վերայ. Խալիբեան դպրոցի վերայ անդադար յարձակուելը և նորա անունը հասարակութեան առաջ ծգելը, ինչպէս որ անում էր Նալբանդեանցը, ի՞նչ արդիւնք ունեցաւ, բացի նորանից, որ Նախիջևանում դպրոց չշինուեց, Թէոդոսիայինն էլ հետզհետէ ընկաւ և խափանուեց։ Կարծում ենք, որ ներուչամիտ ու զգոյշ վարմունքը կստիպէր Խալիբին և դպրոցը Նախիջևանում շինելու, և իւր ունեցածից էլ մի բան ազգին կտակելու. կարծում ենք նոյնպէս, որ Այվազեանը առանց Խալիբի չէր ունենալ այն զօրութիւնը, որ նա ունեցաւ և գործ դրեց թէ իւր—Նալբանդեանցի, և թէ Մատթէոս կաթողիկոսի դէմ. կարծում ենք, վերջապէս, որ Հարուստ Հայրապետեանցը կուսակցական պայքարների պատճառով փոխանակ իւր առևտրական մեծ գործը քայքայելու, Նալբանդեանցի ազդեցութեամբ ընդունակ կլինէր հասարակութեան շահը հասկանալու և իւր մեծ կարողութիւնից մի խոշոր մաս ազգին հանելու, չէնք ասում արդէն այն, որ Նախիջևանի հասարակութեան մէջ Խալիբեան և Հայրապետեան կռիւների պատճառով չէին բոյն դնիլ այն երկարատև կազն ու կռիւը, որ վերջնականապէս չլատեց Ռուսաստանի այդ հայ ամենանշանաւոր գաղութի կենսական ոյժերը։

Պատկանեանցը Պետերբուրգում հանգստանում է իւր երկարատև տառապանքներից. նա այդտեղ գտնուում է իւր ընտանիքի, իւր մերձաւորների մէջ և ապրում է հայ հասարակութեան շրջանում, հայ եկեղեցու մօտ, մայրաքաղաքի ընծեռած կեանքի յարմարութեան ու վայելչութեան մէջ։ Ճիշտ է, առաջին նուազ նա նեղուում է նիւթական միջոցների սղութիւնից, բայց շուտով այդ կողմից ևս բարւոքուում է նորա վիճակը. նա 70 թուին երջանկայիշատակ Գէորգ կաթողիկոսի հրամանով և թոյլտուութեամբ կարգուում է Հայ մանուկների կրօնուսոյց զինուորական դպրոցներում։ Մնում էր միայն մի ցաւ, որ բարոյապէս տանջում ու թունաւորում էր նորա կեանքը—այդ նորա քահանայութիւնից զրկուած լինելն էր, որի հետ այդքան տարի անցնելուց յետոյ էլ, դեռ նա չէր ուզում,

կամ չէր կարողանում հաշտուել. նա երբէք յոյսը չէր կորցնում, դլխից չէր հանում այն միտքը, որ ինքը չպէտք է մեռնի առանց իւր քահանայութիւնը վերստանալու, և միշտ մտածում էր, միշտ յարմար բոպէ էր որոնում յարուցանելու այդ խնդիրը։ Եւ, վերջապէս, այդ յարմար բոպէն ներկայանում է. ոկսուում ու վերջանում է Ռուս-Ճաճկական պատերազմը, խմբուում է Բերլինի վեհաժողովը, և Խորէն Նարբէյը ուղարկուում է Պետերբուրգ Հայոց խնդրի համար աշխատելու. և նրա յաջող լուծման համար հող պատրաստելու, ինչպէս որ նոյն նպատակով ուղարկուած էր Եւրոպա Խրիմեան Հայրիկը։ Պատկանեանցը օգտուում է այդ հանդամանքից և խնդրում է Ներսէս պատրիարքից (17), որ իւր գործը յանձնէ նա Խորէնին, Ներսէս պատրիարքից, որ դորանից մի քանի ժամանակ առաջ արդէն իւր սրտին մօտ ընդունելով նորա դատը, դրել էր այդ մասին վեհափառ Գէորգ կաթուղիկոսին և միջնորդութիւն էր յարուցել Թադաւոր-կայսեր առաջ։ Պատրիարքի, վեհափառ կաթուղիկոսի և Խորէնի միահամուռ աշխատանքը, վերջապէս, պսակուում է յաջողութեամբ, և կայսրը 1878 թուի Հոկտեմբերի սկզբին ներման վճիռ է արձակում, որի հիման վերայ և Պատկանեանցը վերստանում է իւր քահանայութիւնը։ (18)

Պատկանեանցը Պետերբուրգում կենալու իւր 26 տարուայ երկար ժամանակամիջոցի ընթացքում շատ ազատ ժամանակ է ունենում. դիւնուորական դպրոցներում նորա ունեցած դասերը նորանից շատ ժամանակ չէին խլում. նա քահանայութիւն չէր անում, հասարակաց գործունէութիւն էլ նորա համար չկար այնտեղ։ Մնում էր միայն ընթերցանութիւնը և գրական պարապմունքը, որոնց նա անձնատուր է լինում և որոնց համար շատ մեծ յարմարութիւն կար մայրաքաղաքում։ Դորանով ահա պէտք է մեկնել այն հանդամանքը, որ նորա երկերից շատերը գրուած են հէնց այդ ժամանակամիջոցում— 1863—1879։ Նորան այդտեղ և այդ միջոցում շրջապատում են ու սիրտ են տալիս նորա որդի Ռափայէլն և եղբօրորդի Քերովբէն, որոնցից առաջինը արդէն սկսել էր մեծ բանաստեղծի անուն վաստակել իւր հայրենակիցների մէջ, իսկ երկրորդը դիտնականի

ասպարէզ էր ընտրել իւր համար և արդէն առաջանալու շաւղի վերայ էր. նամանաւանդ գրական եռանդուն գործունէութիւն սկսել էր ցոյց տալ Ռափայէլը, որ չշատանալով իւր բանաստեղծութեան տեսարակների հրատարակութեան գործով, այդ միջոցներում հաստատուել էր Պետերբուրգում, ծանօթացել էր Ամղեցու ընտանիքի հետ, տպարան էր բաց արել և ձեռնարկել «Հիւսիս» թերթի հրատարակութեան գործին և դորանով գրական գործունէութեան մի լայն ասպարէզ բաց արել այդպիսի բաների սիրահար հօր առաջ։

Պատկանեանցը, ինչպէս մենք տեսանք, դեռ Հաշտարխանում Հայոց տառեր էր ձեռք բերել, միտքը դրած լինելով մի տպարան բանալու այնտեղ, բայց չէր յաջողել. նոյն տառերը նա իւր հետ տարել էր Նոր-Նախիջևան և բաւականին փող էր ծախսել տառերի պակասը լրացնելու և տպարանն այնտեղ բանալու, բայց այդտեղ ևս զանազան արգելքների էր հանդիպել և չէր կարողացել իրագործել իւր նպատակը։ Թիֆլիսում միայն նորան յաջողել էր իրագործել իւր ջերմ ցանկութիւնը և ձեռնարկել «Արարատի» հրատարակութեան գործին, միւս կողմից էլ երջանկայիշատակ Ներսէս կաթուղիկոսն էր ցանկացել, որ թողնէ իւր տպարանը և բոլորամասն նուիրուի Ներսիսեան հոգևոր դպրոցին, որին տեսուչ էր կարգուել նա։ Այժմ, երբ նա Պետերբուրգումն էր և բոլորովին ազատ և նորա որդին Ռափայէլն էլ տպարան էր բաց արել և ձեռնարկել «Հիւսիսի» հրատարակութեան, լայն բանալով թէ տպարանի և թէ «շաբաթաթերթ բազմավէպ լրագրի» էջերը նորա առաջ, նա բնականապէս սկսում է ամենաեռանդուն գործակցութիւն ցոյց տալ իւր որդու ձեռնարկած հրատարակութեան գործում։ Նա 1863 թուին, երբ սկսում է հրատարակուել «Հիւսիսը», գրում է իւր «Վարդանանց պատերազմի վերայ մտածողութիւն», «Դաստիարակութիւն մարդկանց», «Փայտէ Հիու վերայ նստած յառաջադիմութիւն», «Միաբան են հայք», «Ազգային յառաջադիմութիւն», «Ցարութիւն վարդապետ երբեմն Տէր-Ցարութիւն աւագ քահանայ Ալամդարեանց», «Վարդան Մամիկոնեան», և «Նիկոլ կամ Լեհաստանի Հայերի թշուառութիւնները» յո-

դուածները, որոնցից մի քանիսը, ինչպէս «Ալամդարեանի» մի մասը, «Վարդանը» և «Լեհաստանի հայերի թշուառութիւնները» նա ժամանում է հրատարակել շաբաթաթերթի սուղ էջերում նորա կարճատև կեանքում։

Եթէ «Հիւսիսը» կարճատև կեանք է ունենում, այդ յամենայն դէպս չպէտք է վերագրել նիւթի պակասութեան, որ շատ առատութեամբ մատակարարում էր Տէր-Գաբրիէլը, այլ իւր Ռափայէլի իրրև խմբագրի հրապարակախօսի քանքար չունենալու յատկութեան, որ չի կարողանում մի որոշ ուղղութիւն տալ իւր թերթին, չի կարողանում կեանք ու կենդանութիւն ներշնչել հրատարակուող նիւթերին, հրատապ խնդիրներ յարուցանել, նոր խօսք ասել ընթերցող հասարակութեան և շարժել նոցա հարցասիրութիւնը։ «Արարատի» հրատարակութիւնից անցել էր 13 տարի և ժամանակները շատ փոխուել էին. հասարակութիւնն էլ համեմատաբար հասունացել, ընթերցողների ճաշակը զարգացել և պահանջները աւելացել։ Այն ժամանակները մրցողութիւն չկար և ինչ նիւթ որ տրուում էր, սիրով ընդունուում և կարդացուում էր սակաւաթիւ ընթերցողներից, նամանաւանդ որ Արարատը երկրորդ լրագիրը Ռուսահայերի մէջ, շատ առաջ էր դնացել իւր նախորդ «Կովկասից» թէ իւր հրատարակութեան ձևով, թէ նիւթերի ընտրութեամբ ու բովանդակութեամբ և թէ նամանաւանդ լեզուով «Արարատը» առաջին հրատարակութիւնն է եղել մեր մէջ, որ թողնելով պաշտօնական դրաբառ լեզուն, սկսել է ժողովրդի հետ հասկանալի աշխարհաբառով խօսել, որով և հետաքրքրել է հասարակութիւնը իւր նորութեամբ և ընթերցողների սիրտը իւր հետ կապել։ Ճիշդ է, Արարատում էլ դեռ տպագրուում էին դրաբառ յօդուածներ, բայց այդ շատ չէր խանգարում ներդաշնակութիւնը, այդ մի ժառանգութիւն էր, որ մնացել էր անցեալից, հնութիւնից, որից չէր կարելի իսկոյն և միանգամայն վերջնականապէս բաժանուել և խզել ժառանգութեան կապերը. այդտեղ դլխաւորն այն էր, որ աշխարհաբառին լայն ասպարէզ էր տրուած, ճանաչուած էր նորա իրաւունքը։ Հիւսիսի ժամանակները հրատարակուում էին «Հիւսիսափայլը», «Մեղու Հայաս-

անին», «Կռունկը» և «Մասեաց Աղաւնին», որոնց հետ պէտք էր մրցել և աշխատել մի բանով առաջ անցնել, մի բանով գրաւիչ երևալ հասարակութեան աչքին, որ նա ոչ միայն չի կարողանում անել, այլ և շատ բանով յետ է մնում նոցանից։ Եւ այդ բանում, կրկնում ենք, Տէր-Գաբրիէլը մեղք չունէր, նա իւրը իւր ժամանակին արել էր, նա այժմ էլ գրում էր շատ, անվերջ և թէև միակողմանի, բայց առատ նիւթ էր տալիս և իւր ժամանակակից հրատարակութիւնների մէջ, բացի, գուցէ, Հիւսիսափայլից, կարող էր իրան յատկացրած բաժնում պատուաւոր տեղ բռնել։ Թարմ ոյժը, ցանկալի ուղղութիւն տուողը պիտի լինէր Ռափայէլը, իսկ նորան այդ գործում օգնողը—Քերովբէ Պատկանեանցը և միւսները։

Պատկանեանցը 1863—64 թուերին, երբ ընկնում է Պետերբուրգ և ստիպուած է լինում ընդմիշտ բնակութիւն հաստատելու այնտեղ, լինում է 60—61 տարեկան մարդ, բայց և այնպէս նորա եռանդը դեռ պակասած չի լինում. նա անդադար գրում, թարգմանում, կարդում և ուսումնասիրում է. մինչև իսկ 70 թուականներին, երբ նա ուսուցիչ է նշանակուում զինուորական դպրոցներում և լինում է 70—75 տարեկան ծերունի, նա դեռ այնքան ոյժ է ունենում, որ եռանդով յաճախում է դպրոցները և սիրով կատարում իւր ուսուցչական պարտականութիւնները։ Միայն երկարատև և չափազանց մեծ աշխատանքից հետզհետէ սկսում են նորա աչքերը փճացուել, այնպէս որ 1885 թուին նա իսպառ կորցնում է իւր աչքի լոյսը—սև ջուր է իջնում, և նա այդ դրութեան մէջ մնում է մինչև 1888 թիւը, երբ այն ժամանակուայ նշանաւոր ակնաբոյժ Դումբէրգը վիրահատութիւն է կատարում և վերադարձնում է նորա աչքի լոյսը։ Դժբաղդ ծերունու համար մեծ մխիթարութիւն է լինում, երբ այնքան տարուայ խաւարից յետոյ նա վերստին լոյս աշխարհ է տեսնում, միջոց ստանում նորից իւր աչքով կարդալու և տեսնելու իւր սիրելիներին։ Բայց այդ մխիթարութիւնը երկարատև չի լինում, մի տարուց—1889 թուի Ապրիլի 13-ին, վախճանում է նա 87 տարեկան հասակում և նոյն ամսի 16-ին թաղուում է Սմոլենսկի գերեզմանատանը, ե-

կեղեցու մուտքի ծախ կողմը։ Յուղարկաւորութիւնը կատարուում է շքեղ հանդիսով, ներկայ է լինում մայրաքաղաքի համարեա ամբողջ հայ գաղութը և ուսանողներից մէկը դամբանական է խօսում նորա վերայ և գովում նորա գործունէութիւնը ու գրական հմտութիւնը և շեշտում նորա նշանակութեան վերայ հայ գրականութեան մէջ իբրև Ռուսահայոց աշխարհարարագրի հիմնադրի։

Պատկանեանցն իւր երկարատև գործունէութեան ընթացքում խիստ շատ է գրել, սկսելով իւր կեանքի ամենավաղ հասակից ու վերջացնելով խորին ծերութեան օրերում. նորա առաջին գրուածքը համարուում է «Պատմութիւն Աղէքսանդրի Մակեդոնացւոյ», որ նա թարգմանել է ռուսերէնից դեռ իւր պատանեկութեան հասակում, երբ նոր միայն կարդուել էր նա ուսուցիչ Հաշտարխանի նորաբաց հոգևոր դպրոցում, և տպագրել է նորան 1823 թուին։ Սակայն նորա այդ բազմաթիւ գրուածներից համեմատաբար շատ քիչ մասն է հրատարակուել և աւելի քիչ մասը առանձին գրքով լոյս աշխարհ տեսել։ Դորան, գուցէ, պէտք է վերագրել այն հանգամանքը, որ մինչև ցայսօր դեռ, չնայելով, որ հեղինակի մահից արդէն իսկ անցել է 17 տարի, մի քիչ թէ շատ լիակատար աչքի ընկնող ուսումնասիրութիւն չի դուրս եկել մեր գրականութեան մէջ նորա գրուածների վերաբերմամբ. թէև այն էլ պէտք է ասել, որ նորա մինչև իսկ տպագրուած երկերն այնքան արդեն հնացել են և կորցրել իւրեանց արժէքը ու այժմէութիւնը, որ միայն մասնագէտներին քիչ, թէ շատ կարող են հետաքրքիր լինել, իբրև նիւթեր, իբրև մեր նոր գրականութեան մօտ անցեալի յիշատակարաններ։

Թէև հանդուցեալը գրականութեան համարեա թէ բոլոր ճիւղերում էլ փորձել է իւր ոյժը, բայց նորա գրուածների ամենամեծ մասն, նայելով նոցա բովանդակութեան ու ձևին, կարելի է բաժանել երեք մասի՝ արձակ գրուածներ կրօնական բովանդակութեամբ, արձակ գրուածներ պատմական բովանդակութեամբ և բանաստեղծութիւններ պատմական և կրօնական բովանդակութեամբ։ Թողնելով մի կողմ բանաստեղծութիւնները,

որոնց մասին մենք արդէն իսկ մի փոքր առաջ համառօտակի խօսեցինք ու որոշեցինք նոցա արժէքը, և կրօնական գրուածները, որոնց ամենամեծ մասը տակաւին ձեռագիր է և այդ պատճառով իբրև մեծ մասով մեզ անծանօթ նիւթ չի կարող քննութեան առարկայ լինել, մենք այստեղ կաշխատենք համառօտաբար խօսել միայն նորա պատմական գրուածների մասին և որոշել նոցա արժէքը գրական և պատմական նիւթի մշակման տեսակէտից, պատմական գրուածների, որոնք, մեր կարծիքով, ամենաաչքի ընկնելուն են նորա բոլոր գրուածների մէջ։ Նորա պատմական գրուածներից մեզ ծանօթ են՝ «Հայոց ազգի պատմութիւնը», «Նիկոլ», «Հարիւրամեակ Ն. Նախիջևան հայաբնակ քաղաքի», «Ներսէս Ե. կաթողիկոս և հայրապետ ամենայն Հայոց» և «Ցարութիւն վարդապետ Ալամդարեանց», որոնցից առաջին երկուսը տպագրուած են և լոյս ընծայուած առանձին գրքերով, իսկ վերջինները դեռ ձեռագիր են։ (19)։

«Հայոց ազգի պատմութիւնը» ոչնչով չի տարբերուում մեր միւս բազմաթիւ Հայոց պատմութիւններից. դա, ինչպէս և միւսները, համառօտութիւն է Զամչեան հատորների։ Եթէ մի նորութիւն կայ դորա մէջ, այդ էլ, դուցէ, այն է, որ հեղինակը աշխատում է ցրել այն կարծիքը որ Հայերը իբրև թէ անմիաբան են և որ Հայոց ազգի բոլոր դժբաղդութիւնը հէնց առաջ է եկել և առաջ է գալիս այն հանգամանքից, որ նոքա միաբան չեն գործել և գործում։ Բացի սրանից, նա իւր պատմութեան մէջ յայտնում է և մի ուրիշ, մեր կարծիքով, շատ տարօրինակ կարծիք, որ իբրև թէ մեր ազգի քաղաքական տապարիզում ունեցած անյաջողութեան պատճառներից մէկն էլ պէտք է համարել այն, որ նորա գործի գլուխ կանգնած գլխաւոր նախարարական տները զուտ հայ ծագումն չեն ունեցել, օտար են եղել։ «Նիկոլը» Առաքել Վաղարշապատցու աշխարհաբառի վերածած և ընդարձակած պատմութիւնն է։ Հարիւրամեակը հաւաքածու է ամեն տեսակ նիւթերի. այդտեղ պատմական նիւթերի հետ խառնուած են շատ մեծ ծաւալով կենսագրականներ, կողմնակի դատողութիւններ, կրօնական մեկնութիւններ, առասպելներ և հեքեաթածև պատմութիւն-

ներ և այլն և այլն։ «Ներսէս կաթողիկոսը» և «Յարութիւն վարդապետը», վերջապէս, զուտ պատմութիւն չէն, այլ կենսագրականներ իւրեանց պատմական պարագաներով։ Ընդհանրապէս նորա բոլոր պատմական հաժարուած գրուածներում չի երևում պատմական նիւթի կանոնաւոր մշակութիւն, պատմական մի որոշեալ հայեացք համաձայն այդ գիտութեան նորա ժամանակները եղած զարգացման աստիճանին, պատմական աղբիւրների լուրջ ընտրութիւն և քննադատութիւն, համեմատական եղանակ, ազգային անաչառութիւն և խուսափումն առասպելաբանութիւններից—յատկութիւններ, որոնք ամեն մի իսկական պատմաբանի առաջնորդող ֆակտորները պիտի լինեն, ամեն մի լուրջ պատմութեան ուղն ու ծուծը, հիմնաքարը պիտի կազմեն։ Եւ առհասարակ հանդուցեալի բոլոր գրուածների ընդհանուր յատկութիւններն են՝ աւելորդաբանութիւնը, մտքի քաջութիւնը, խօսքի շատութիւնը, անվերջ անծայր հեքեաթաբանութիւնը, սիստեմի պակասութիւնը, կողմնակի դատողութիւնները, Ս. Գրքից բերած օրինակները և նոցա հետ տրած համեմատութիւնները։ Ոչ ոք, մեր կարծիքով, օրինակի համար, չի կարող առանց ծանծրանալու կարդալ սկզբից մինչև վերջը «Տէր-Կիրակոսի պատմութիւնը», որ զետեղուած է Հարիւրամեակի մէջ, և կամ «Հայոց ազգի ուսումնատուութիւնը ուսումնարանք և ուսուցիչք», որ հրատարակուած է առանձին գրքոյկով 1865 թուին, այնքան յոգնեցուցիչ ու ծանծրացուցիչ են դոքա։ Պատկանեանցի գրուածների դժուարութեամբ կարդացուելուն և շատ շուտով հնանալուն, բացի վերոյիշեալ բոլոր թերութիւններից, նպաստում է և նորա գործածած լեզուն, որ մի խառնակ ու տնկաղմ բան է. գրաբառ է—գրաբառ չէ, աշխարհաբառ է—աշխարհաբառ էլ չէ, այլ աշխարհաբառախառն գրաբառ, կամ ընդհակառակը՝ գրաբառախառն աշխարհաբառ։

Ե. ՇԱՀԱԶԻԶ

ՔՕՍԱ-ԴԱՂ ԼԵՐԱՆ ՎԿԱՆ

(Թրքահայ գաղթականների կեանքից)

III

Կէսօրուայ տօթը վաղուց էր մեղմացել։ Երեկոյ էր. արևը արագ-արագ մօտենում էր հորիզոնին, իր ետևից թողնելով անթիւ ու անհամար ստուերներ։ Իւրաքանչիւր առարկայ աշխատում էր՝ իր ստուերով որքան կարելի է աւելի ևս ձգուել երկրի վրայ։ Բացառութիւն չէին կազմում և Տըրխ գիւղի գերեզմանոցի հազարաւոր դամբարանաքարերը, որոնք իրանց սև-սև ստուերներով դաժան կերպարանք էին տալիս գերեզմանոցին և աւելի ևս սոսկում, ահ ու դող տարածում մարդու վրայ։ Զարմանալի է հայի ազգայնական յատկութիւնը՝ ինչպէս և լինի ծածկել իր սիրելիների շիրիմները յաճախ վիթխարի ժայռերով, եթէ նիւթականը չէ նեղում նրան սեպաձև քարեր ձեռք բերելու։ Գերեզմանոցում միայն մի շիրիմ էր երևում առանց տապանաքարի։ Շիրիմը նոր էր, որը պարզ աչքի էր ընկնում նրա թարմ հողից։ Դա, ընթերցող, Սոնայի շիրիմն էր։ Այդ թշուառ զոհը մի քանի օր մաշուելով տանջանքների բովում, վերջապէս փոխուեց յաւիտենականութեան գիրկը և իր թարմ հողաթմբով հեռուից աչքի էր ընկնում այդ գերեզմանոցում։

Գերեզմաններ... ո՞վ չէ արտասուոր ահաբեկող երկիւղ զգում իր երակներում, ակամայ զանազան ցնցումների ենթակայ լինում, երբ տեսնում է ձեզ և շրջում է ձեր մէջը։ Ո՞ր իրան անմահ կարծեցող անհատ, ձեր շուրջը գտնուելով, չի հնազանդում բնութեան ընդհանուր օրէնքին և ակամայ աչքերը երկինք դարձնում, իր ոչնչութիւնն զգում և ինքնիրան մրմնջում՝ «ունայնութիւն ունայնութեանց, ամենայն ինչ ընդունայն է» և իրան էլ մահկանացուների թուումն հաշուում։ Ո՛հ, դառն են ձեր թողած տպաւորութիւնները, ծանր է և մաշող ձեր ներկայութիւնը։ Քանի-քանի

սիրեցեալ սրտեր էք դուք բաժանել իրարից՝ բուռն փափագը անկատար թողնելով նրանց սրտերում։ Քանի-քանի վեհ գաղափարներով տոգորուած սրտեր էք կուլ տուել, որոնք, դուցէ, և ընդ միշտ կորել են մարդկութեան համար։ Որչափ անյաղթ հրվկաններ են լուռ ու մունջ ձեր գիրկը մտել և կորել յաւիտենական ովկիանոսում։

Անողոք և կսկծեծուցիչ են եղել ձեր տուած հարուածներ... Դուք քամել էք և քամում էք վշտի արտասուքներ սկսած զառամեալ ծերերի աչքերից մինչև վերջին թոթովախօս մանուկի աչքերը։ Սակայն և որքան սթափուեցուցիչ դեր էք խաղացել և պիտի խաղաք անհատի և մարդկութեան վրայ։ Գերեզմաններ... որքան շատ բան էք դուք մեզ ասում։ Սրտերի, զգացմունքի ծովեր կը կազմէիք դուք, եթէ գէթ մի օր ձեր տարած այդ զոհերը կարողանային դուրս պրծնել ձեր սպանիչ կապանքներից։ Դառն է, դառը ձեր լռութիւնը... Դուք ձեր լռութեամբ հազարաւոր պերճախօս լեզուներից լաւ ապացոյց էք տալիս ձեր ինչ լինելու, ձեր էութեան մասին...

Օրուայ այդ պահուն գերեզմանոցում միակ մի մարդ էր երևում։ Տեսնողը անշուշտ կը կարծէր, որ դա մահուան ճիրաններից փախուստ տուած բաղդաւոր մահկանացու է։ Նրա դէմքը վշտից, լաց ու կսկծից, սուգ ու շիւանից թորշոմած մի բան էր ներկայացնում իր աննկարագրելի այլայլութեամբ։ Նա յուսահատուած էր և լուռ։ Նրա ներքին աշխարհը այդ ժամին հազարաւոր փոթորիկներից երերուած ծովի նման ծփում էր յուզմունքի ալիքների տարափի տակ և ոչ մի տեղ հանգիստ չէր կարողանում առնել։ Ստէպ ստէպ նրա կրծքի խորքերից լսւում էին խուլ հառաչանքների ձայներ, որը ասես ընդհատում էր շնչարգելութեամբ։ Նա այնքան էր ընկղմուած վշտի ինքնամոռացութեան մէջ, որ ուշադրութիւն անգամ չէր դարձնում իրան շրջապատող հազարաւոր շիրիմների վրայ. ըստ երևութին նա վաղուց, շատ վաղուց ծանօթ էր լռութեան այդ աշխարհի հետ և առաջին անգամ չէր, որ շրջում էր գերեզմանոցում։

Նա կամաց-կամաց մօտեցաւ Սօնայի գերեզմանին և յանկարծ միանգամից իր ահեղ ձայնով թնդացրեց տիրող լռութիւնը, ասես մի ահագին դետ արգելուած լինէր երկրի խորքերում, որը ներքին մի ոյժի բռնկումով քանդում է իր արգելքները և ձայների, խշշոցների, գոռոցների ահագին տարափով դուրս է վազում, այդպէս և նրա շիւանի հետ արտասուքը հեղեղի նման սկսեց վազել նրա աչքերից և նա ծունկ չոգեց այդ գերեզմանի առաջ ու անհամար համբոյրներով ծածկեց անբաղդ զո-

հի շիրիմը։ Երկար նա դլուխը խոնարհած հողակոյտի վրայ մնաց ընկած. բայց յանկարծ մի ինչ որ բան յիշեց և իսկոյն ուղղուեց, ձեռքը դրպանը տարաւ և այդտեղից դուրս բերեց այն թղթի ծրարը, որը Սօնան հոգևարքի րոպէներին կտակել էր Սալվիին՝ յանձնել Վահէին։ Դա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի նամակ։ Նա բաց արեց և կարդաց մի քանի անգամ։

Ընդ միշտ իմ Վահէ.

Այս նամակս ես միշտ դրպանումս եմ պահելիս եղել իմ նըշանադրութեան հէնց առաջին օրից։ Հաւատացած եմ մեռնում, որ ինձանից յետոյ քո օրը՝ օր չի լինի, և քո կեանքը՝ կեանք չի լինի։ Բայց խնդրում եմ ոյժ ունենաս դէթ՝ եթէ ոչ սէր, գոնէ մի մխիթարութիւն ձեռք բերես քեզ համար, որով և մասամբ կը մեղմես դառն օրերիդ տանջանքները։ Մի յուսահատուիր։ մի վշտանար իմ անսահման անկեղծ սէրը և ես կը լինենք քեզ միշտ պահապան։

Քո Սօնա.

«Դէթ սէր, մի մխիթարութիւն ձեռք բերես...» մրմնջաց այդ հոգեպէս դժբաղդ հիւանդը, որը, չեմ կասկածում, ընթերցող, հասկացաք, որ Վահէն էր։

Այդ թշուառ երիտասարդը չը մեռաւ. բժիշկը կարողացաւ զանազան դժուարութիւնների, բարդութիւնների առաջն առնել, որի շնորհիւ, համարեա, նոր կեանք ստացաւ նա.—Քեզանից յետոյ, իմ վաղամեռիկ Սօնա ջան, ինձ ի՞նչ մխիթարութիւն կայ. ի՞նչ սէր կարող է բուն դնել մի վիրաւոր սրտում, որ ես կարողանամ մեղմել թունալի օրերս,—կրկնում էր Վահէն,—ո՛չ, ո՛չ, չկայ այս աշխարհումը ինձ մխիթարութիւն. չկայ այս վերան երկրում ինձ համար մի այլ սէր, բացի քո սիրուց. բայց դու, իմ հոգեակս, ո՞ւր ես, ո՞ւր... Վերջին բառերն արտասանելիս, նա, համարեա, թուլացած ընկաւ Սօնայի գերեզմանի վրայ։ Նա ոչ մեռաս էր, ոչ կենդանի. ընկած էր ցնորքների աշխարհում։ Նրան թւում էր, որ իրանց ոչ հեռու երևում է մի սև ամպ, որը հետզհետէ ցածրանալով սև մշուշով ծածկում շրջակայքը։ Այդ մշուշի միջից Վահէն պարզ տեսնում էր ամեն բան. նրանից ոչ հերու երևում էր վայելչագեղ հասակով և գեղաղան դէմքով մի համեստագոյն կոյս, որը գաղտագնաց քայլերով դէպի իրան էր գալիս։ Վշտաբեկ երիտասարդը չը կարողացաւ որոշակի ճանաչել՝ Սօնան էր այդ, թէ մի ուրիշը, նրան նման ակից։ Վեր բարձրացաւ ընկած տեղից և ուզում է

դէպի նրան ընթանալ. բայց աւաղ որտեղից որ էր դղրդաց ամբողջ մթնոլորդը, աղջամուղջը պատեց շրջակայքը և ահաբեկող որոտումները, գոռում-գոչումը, քամիների սուլոցը վայր գլորեցին թէ իրան և թէ հրաշագեղ կոյսին։ Վահէն ուշաթափուեց. երբ ուշքի եկաւ, կարմանքից թէ կսկծից մնաց տեղն ու տեղը քարացած. վայելչակազմ այդ կոյսը վիրաւորուած և անդամահատուած ընկած էր գետնի վրայ զանազան տեղերում։ Նրա վրայ ընկած էին զանազան թշնամիներ և խելակորոյսի նման չը գիտէին՝ ինչպէս յագուրդ տային իրանց տուփանքին։

Վահէն զղուեց այդ անախորժ տեսարանից և պատրաստուեց հեռանալ. սակայն յանկարծ կոյսի յօշոտուած մարմնի իւրաքանչիւր մասից այնպիսի սուր ճիչ լսեց, որ ամբողջ մարմնով դողաց ու փշաքաղուեց։

—Ո՞ւր, ո՞ւր ես հեռանում, ով երիտասարդ,—ձայն էին տալիս նրան կոյսի մարմնի անդամները,—ես դեռ չեմ մեռած. երակներումս տակաւին կենդանութեան կայծեր կան։ Շատերը եկան և ինձ այսպէս վիրաւոր տեսնելով, գլխակոր փախուստ տուին. դրանցից ամեն մէկը զուրկ էր անձնազոհութեան ընդունակութիւնից, ամեն մէկը որևէ անձնական հաշիւներով էր զբաղուած։ Դու էլ եկար և այսքանը տեսնելուց յետոյ, պատրաստւում ես հեռանալ. դու ես մնացել եմ վերջին յոյսն ու ապաւէնը դու ես օժտուած ուսման—քաղաքակրթութեան պաշարով, սակայն դու էլ տակաւին քո Սօնայով ես զբաղուած։ Թող, թող աղաչում եմ. ես հազարաւոր Սօնաներ եմ տեսել, հազարաւոր ընկածի օգնութեան հասել, բայց, տարաբաղդաբար, այսօր ոչ ոք ինձ մօտ չի գալիս։ Ինչու՞ ես զարմանում, մի՞թէ չը գիտես թոյլին, ընկածին, անարգուածին օգնութեան հասնել, ոտքի կանգնացնել մեծ առաքինութիւն է և վիրաւոր սրտի համար մխիթարութիւն ու սփոփանք։ Ինչու՞ ես զմայլուած և ինձ դիտում. միթէ կարծում ես Սօնայիդ սէրից բարձր սէր չը կայ. միթէ հաւատացած ես որ բացի Սօնայից քեզ մի այլ մխիթարութիւն չկա՞յ։ Կայ, բայց դու տակաւին չես ըմբռնած. զգաստացիր և քեզ նուիրիր այլոց օգնութեան, ընկածի, անարգուածի փրկութեան և դու մխիթարուած կը լինես ու բաղդաւոր։ Հինգ-վեց տարի տոկունութիւն ունեցար չը տեսնուել Սօնայիդ հետ և նուիրուել թոյլի, անարգուածի բաղդաւորութեան, այժմ էլ հաւատացած եղիր, որ այն սէրը դարձեալ կը ղեկավարի քեզ և աւելի ևս երջանիկ կլինես... Ցիշիր տուածդ երդումը, ուխտը, երբ դեռ նոր աւարտած տուն էիր վերադառնում...

Վահէն ոգևորուեց և վազեց դէպի նա. բայց իսկոյն կանգնեց,

որովհետև նրան վայրկենաբար շրջապատեցին սուինների զինուած սպաներ, որոնք դէպի նա ուղղեցին իրանց սուինների ծայրերը։ Թշուառ երիտասարդը մնաց շուարած, բայց այդ ժամին նա դարձեալ լսեց վիրաւոր կոյսի հառաչանքի ձայնը։

—Անմտութիւն է, Վահէ, քո գործածը. սրանցից իւրաքանչիւրը ունի իր թիկնապահները, որոնք մահի և կեանքի դիմադրութիւն ցոյց կը տան քեզ, եթէ դու ձեռնունայն մարտնչելու լինես։ Վերադարձիր, զինուիր նման զէնքերով, ապա շտապիր այստեղ։ Օրինակելի է իմ անդամների յատկութիւնը. նրանք գիտեն իմ նախկին գեղեցկութիւնը ինձ վերադարձնել։

Վահէն զարթնեց։ Մութը նոր էր սկսել և կամաց-կամաց տարածուել։ Նա մնաց զարմացած թէ՝ այդ ինչ երազ էր. յիշեց իր անցեալը, իր տուած ուխտը և տխրութեամբ լռեց. նա սթափուած էր։ Մինչ սա այս դրութեան մէջ էր գտնուում, նրան մօտեցան հէքիմը Արթոյի, Թորոս-Բիձայի և Սալվիի հետ, որոնք միմեանց ետևից սկսեցին մխիթարել նրան։ Սրանք բոլորն եկել էին Սօնայի գերեզմանը համբուրելու, որովհետև միւս օրը ճանապարհ էին գնալու, թողնելով Սալվի տատին և Վահէին Տըրխ գիւղում։

IV

Գեանձակ, Արմզոնք, Ծակ-ծակ, Հէգ-Ձոր, Ջուտ-Դեղ, Արջէ-նից-Վանք, Նոր-Շէն և տասնեակ սրանց նման գիւղեր բոցերի և ծուխերի մէջ էին, որոնք իրանց այդ անսպասելի աղէտով գալիս էին բարդելու Վանայ ծովակի դարաւոր վիշտ ու ցաւը։ Նրա ամբողջ շրջակայքը կրակի ճարակ դառած՝ դիշերային խաւարի մէջ մի ահաւոր լապտերի էր նմանւում, որը ասես պատրաստել էին ծովակի հայելին աւելի ևս պարզ տեսնելու։ Նրա շրջակայքը աւերուած, թալանի ենթարկուած էր և այժմ մի հրէշաւոր հնոց էր ներկայացնում, որի միջից մերթակի լսւում էր թշուառ գեղջուկի վերջին օրհասական հառաչանքը, ճիչը, որոնց պակասը գալիս էր լրացնելու նրա մարմնի ճենճեռոցի գարշահոտութիւնը։ Իսկ աւելի հեռուում, լեռների ստորոտներից ու լանջերից թռչում էին և գալիս նոյնքան աւելի սրտամաշ լաց ու կոծի, խուլ հոնգուրոցի ձայներ, դրանք քրդի գիրկ գլորուած ու գերի տարուած հայ գեղազան օրիորդների և նորահարս տիկինների ճիչ ու աղաղակներն էին, որոնք լսւում էին քրդական վրաններից, ուր փախցրել էին և դրել այդ դժբաղդ զոհերին։ Ամէն ինչ տխուր էր և սրտամաշ։ Տարիների ընթացքում արիւն քրտինքով ձեռք բերած

հայ գեղջուկի վաստակը այժմ մի բոպէում բոցերի՝ հրեղէն լեղունեքի ճարակ էր դառնում և մոխրի կոյտեր կազմում, որով ասես գալիս էր բողոքելու մարդկանց քարասրտութեան և տմարդի վարմունքի դէմ։ Տանտէրը իր քանդուած օջախի կողքին այրւում, փոշի էր դառնում, անէծք ու նզովք կարդալով բռնակալութեան անարդ սկզբունքին։

Սակայն սրանք աւելի երջանիկ էին այն կենդանի մնացածներից, որոնք թողնելով այդ երկրում՝ կրակների և բոցերի մէջ և թշնամու գրկում իրանց սիրելիներին, մի կերպ փրկել էին իրանց չարքաշ գլուխը և սար ու ձոր ընկել, իրանք էլ չիմանալով թէ՝ ուր են գնում։ Ժամերով, օրերով քաղցի կարիքը նրանց խոտաճարակների էր վերածել և նրանք այս ու այն խոռոչից մերթ-մերթ գաղտագողի դուրս էին պրծնում ու խոտերի վրայ ընկնում և մի ապշեցուցիչ եղանակով արօտ անում, որից յետոյ դարձեալ անյայտանում իրանց ծածկավայրերը, որ քուրդը նշմարել չը կարողանայ և երբ գիշերը վրայ հասնի, նորից իրանց անյայտ ճանապարհը շարունակեն դէպի մութ ապագան։

Շարունակելով անհնախանձելի և չարքաշ կեանքը, ոմանք խումբ-խումբ մի կերպ հասնում էին Աղթամարի Ս. Գէորգի արքավայրը և պատսպարւում այստեղ. մի քանի շաբաթուայ ընթացքում խմբուել էին այդտեղ. մի քանի հազար թշուառ բաղդից հալածուածներ, իրանք էլ չիմանալով թէ՝ ինչու համար են խմբւում այդ վշտալից մենաստանում։ Պէտք էր տեսնել, թէ այստեղ որքան սոսկալի և որքան օրհասական դարձաւ վանականների դրութիւնը, սրանք մի քանի նաւ վարձած՝ միշտ գաղտանողի այս ու այն վայրերն էին ուղարկում ուտեստի պաշար հայթայթելու սովալուկների համար։

Մի առաւօտ, երբ նաւերից մէկը հացի պաշարով բեռնաւորուած՝ պատրաստւում էր վերադառնալ կղզին, ձորի եզերքին, նաւակից ոչ հեռու, երևեցաւ մի երիտասարդ, որը աճապարում էր հասնել նաւին և նրանով կղզին ուղևորուել։ Սակայն նաւավարները չը նայած նրա թախանձանքին մերժեցին վերցնել նրան նաւի վրայ և սկսեցին իրանք թիավարել դէպի կղզին։

—Ես հայ եմ,—գոռում էր թշուառ երիտասարդը,—ինչու այդպէս քարասիրտ էք դէպի ինձ։

—Գուցէ և հայ լինես, բայց որքան օգուտ մեզ քեզ նման հայերից. շատերն են այդ անբաղդ անուան տակ մեզ մերձենում. բայց ապագայում զգում ենք, որ մենք չարաչար խաբուած ենք եղել, որովհետև դրանք ուրանալով իրանց սիրտ ու զգացմունքը, դաւաճանի անարդ դերն են կատարում։ Օ՞, այդպիսի հայերով

լիքն է այժմ մեր քանդուած երկիրը. որքան երջանիկ, որքան բաղդաւոր կը լինէինք մենք, եթէ էդպիսի հայերը բնաւ չը ծնուէին այս սգաւոր հողի վրայ,—կրկնում էին նաւավարները և առաջ ընթանում։

—Իզուր էք, եղբայրներ, ինձ դաւաճանի տեղ ընդունում, ես մի դժբաղդ ճանապարհորդ եմ, նոր եմ եկել երկիրը և ուզում եմ անպատճառ կղզին անցնել. խղճացէք ինձ։

—Անցիր, ինչպէս քէֆդ ուզում է,—լսւում էր արագ-արագ հեռացող նաւակից։

Անծանօթը մնաց շուարած. ետևից նրան վտանգ էր սպառնում. նրան հալածում էին քրդերը, որոնք անշուշտ սրախողխող կ'անէին նրան, եթէ բռնէին. իսկ առաջ գնալ անհնարին էր։ Մի քանի վայրկեան լռութիւնից յետոյ, անծանօթի գլխում յղացաւ մի նոր միտք. նա ամբողջովին հանեց իր զգեստները, կապեց գլխի վրայ և առանց տատանուելու ջուրը նետուեց ու սկսեց լողալ նաւի ետևից դէպի կղզին։ Երկար քափ ու քրտինք թափելով, վերջապէս նա դուրս եկաւ ցամաքը։

Մի ակնթարթում նրան շրջապատեց անբաղդների մի ստուար բազմութիւն, որը մի բոպէ մոռանալով իր սեփական վիշտը, հետաքրքրութեամբ շարուել էր եզերքին և դիտում էր ջրի ահռելի ալիքների հետ մաքառող լողորդին և, երբ նա դուրս էր եկել, շրջապատել էր նրան և հարցերի մի հեղեղ էր, որ թափում էր նրա գլխին։

—Ո՞վ ես դու, որտեղից ես գալիս, ինչու էդպէս վարուեցիր, չէ՞ կը խեղդուէիր... և հազար սրանց նման հարցեր, որոնց իհարկէ, յաճախ անծանօթը չէր էլ պատասխանում։

Անծանօթը շարժել էր և միաբանների հետաքրքրութիւնը, սրանք էլ շուտով մօտեցան նրան և հրամայեցին կալանաւորել։

—Սրբազան հայրեր, ինչու էք առանց պատճառի, առանց հարց ու փորձի կալանաւորում ինձ. յանցանքս ինչ է. չէ՞ որ ես հայ եմ և ձեզ եմ դիմել։

—Ո՞վ է ուրանում, որ դու հայ ես. բայց ակներև է և այն, որ դու մեզանից օտարացած հայ ես և, ինչպէս մենք գիտենք, քեզ պէս շատերը այդպէս միայնակ, յանկարծ անսպասելի կերպով յայտնւում են այս ու այն տեղ ու մի օր դարձեալ անհետանում, որից յետոյ այդ վայրերից հազարաւոր զոհեր են կախաղան հանւում, կամ սրախողխող լինում դրանց դաւաճանութեան շնորհիւ. ոչ, մենք արդէն զգաստացել ենք. քեզ պէս շատերը եկան ու կորան։ Այժմ մենք փորձուել ենք։ Նրանց բոլորի փոխարէն դու պիտի տուժես,—պատասխանեցին նրան միաբերան։

—Ո՛չ, ոչ, սրբազան հայրեր, երդւում եմ այս հինաւուրց Նուիրական սրբավայրերով, որ ես Տըրէ գիւղիցն եմ եկել. իմ ընկերներս հեռացան ինձանից մի քանի օրով։ Ես երկար, շատ երկար սպասեցի նրանց ճանապարհին. շաբաթներ, ամիսներ անցան, և նրանք չը վերադարձան։ Վերջապէս, ինձ յայտնուեց իմանալ, որ նրանք այս կողմերն են եկել թշուառներին ձեռքից եկած օգնութիւնը չը խնայելու. ես էլ եկայ նրանց ետևից. ինձ ասացին, որ նրանք անշուշտ ձեր վանքում կը լինին։ Մի՞ տանջէք ինձ, անողոք բաղդը շատ է տանջել ինձ։ Ես աւելի շուտ գերեզման կ'իջնեմ պատուաւոր մահով, քան դաւաճան-մատնիչի անարգ ու զզուելի անուան տակ ապրել կը ցանկանամ։ Եթէ չէք սպանելու, կալանաւորեցէք, որ գոնէ կենդանի մնամ և սրբել կարողանամ ինձանից այդ արատը, որի մէջ ինձ էլ էք կասկածում, եթէ սպանէք, իմ գերեզմանս անարգանքի առարկայ կը դառնայ ապագայ սերնդի առաջ։

—Տեսնում էք՝ ինչ ճարպիկ լեզու ունի,—վրայ բերեց վանահայրը,—այդպէս օձի լեզու միայն դաւաճան-մատնիչները ունին. բերեցէք դրան իմ ետևից, տղայք։

—Ես ինքս կը գամ, սրբազան հայր, հրամայիր թող ձեռքերս կապած լենին. տար ինձ ուր ուզում ես,—դիմեց նրան անծանօթը։

—Տղայք, դրա հետ հետևեցէք ինձ։

Շուտով նրանք հասան կղզու այն ժայռի գլուխը, որտեղից միշտ վայր էին նետում նրանք յանցաւորներին։

—Ինչու՞ էք, սրբազան հայր, այդքան շտապում ինձ մահացնելու. միթէ կարելի բան է առանց ստուգելու թէ ես ո՞վ եմ. ինչով՞ արդեօք ես հաւատացնում ձեզ, որ դաւաճան չեմ և որ դուք չարաչար սխալւում էք։

—Այսպիսի ժամանակներում դաւաճան տիպեր շուտ են աչքի ընկնում. և դրանք ոչ մի բանով չեն կարող հաւատացնել մեզ, որ իրանք սուրբ մարդիկ են։

Այս ասելուց յետոյ, վանահօր հրամանով մօտեցան անծանօթին վանքի սպասաւորներից երկուսը և կապեցին նրա ոտքերը և տարան նրան ժայռի այն եզերքին, որից երևում էր ահռելի անդունդը, ուր ծովը քաղցած վիշապի նման ասես աչքերը չռած այդպիսի զոհերին էր սպասում։ Անծանօթը, տեսնելով որ մի երկու րոպէից յետոյ ինքը ծովի ջրերին կերակուր է դառնալու և, զգալով, որ ոչնչով մեղմել վանահօր սիրտը կարելի չէ, խնդրեց նրան մի քանի րոպէ սպասեցնել տալ մինչև վերջացնէ իր ասելիքը։

—Սրբազան հայրեր, իւրաքանչիւր մահկանացուի այս սև աշխարհում մի վախճան է գրուած. և իւրաքանչիւր փոքր ի շատէ պատուախնդիր անհատին ցանկալի է, որ այդ վախճանը անարատ լինի. ես այս վերջիններիցն եմ. ես որքան թախանձեցի՝ չը կարողացայ համոզել ձեզ, սակայն չը կարծէք թէ վախենում էի մահից. ոչ. այն օրից, երբ անողոք ժամանակը և չարաբաստիկ հանգամանքները զերեզման տարան իրանց հետ իմ սիրտն ու հոգին, այն օրից, երբ ես տարիների ընթացքում մասամբ ծանօթացայ այս դժբաղդ երկրի հետ, ուսումնասիրեցի նրա նոյնքան դժբաղդ զաւակների օրը, այդ օրից ես իւրաքանչիւր ժամ, իւրաքանչիւր րոպէ մահս աչքի առաջ եմ ունեցել և ինձ նուիրել եմ այդ երկրի ու ժողովրդի կարիքներին։

Վեց երկար, բայց և վեց նուիրական տարիներ եմ շրջել այդ երկրի ամեն մի ծակ ու ծուկը։

Օ՜, ինչե՞ր չեմ տեսել. ինչերի՞ ականատես չեն եղել աչքերս. այսօր էլ հեռու երկրում, թողած սիրելիների մի ստուար բազմութիւն, ես շտապեցի այս թշուառութեան, անբաղդութեան բեմը և այժմ էլ ուրախ եմ, որ այդ վեհ գաղափարին եմ զոհ գնում, եակայն ցաւալի է որ այդ կատարւում է եկեղեցու սպասաւորի ձեռքով։ Այո, դեռ կենդանի է Տրաթլամայի ոգին, դեռ շրջում է նա մեր թշուառ իրականութեան մէջ։ Այս երկրորդ անգամն է, որ ես զերեզման եմ իջնում։ Առաջին անգամ հեքիմիստ և Արթոյի հոգատար ձեռքերին եմ պարտական, որ քանդեցին մահուանս սպանիչ կապանքները և դուրս բերին ինձ այնտեղից։ Ա՜խ, ինչու դուրս եկայ, ինչու այն օրը չը մեռայ, մնացի կենդանի, որ այժմ աւերուած, ահ ու դողով պաշարուած այս սրբբական վայրերի վիշտն էլ հետս յաւիտենականութեան աշխարհը տանեմ ու այն անեղ Աթոռի առաջ սփռեմ։ Բայց մի՞թէ քարացած է այդ Աթոռի գութը, ողորմութիւնը։ Դուք կղզիացել էք այս հինաւուրց վայրում, բայց խնդրում եմ, աղաչում, հանգամանքները ներածին չափ դուրս եկէք ձեր վանդակից, շրջէք այս դժբաղդ երկրում· օ՜ դիտէք ինչեր կը տեսնէք... որքան աւերուած, մոխիր դառած գիւղեր, որքան արիւն քրտինքով ներկուած տներ կրակին զոհ դառած կը տեսնէք։

—Տօ, էդ ինչ է դուրս տալիս,—գոռաց վանահայրը,—դէհ, վայր գլորեցէք անզգամին, տղայք։

Սպասաւորները բռնեցին անծանօթի վզից, մի վայրկեան և նա ջրերի գրկում կը լինէր. բայց այդ րոպէին մի կարճահասակ տղամարդ, ճեղքելով ամբոխի շարքերը, իր բազուկների ամբողջ ոյժով բռնեց նրանց ձեռքերը,—այդ ինչ էք անում, այդ

ուն էք ջրերին կերակուր ուղարկում,—վրայ բերեց նա,—արձակեցէք այս անբաղդ զոհի ոտքերը և ձեռքերը։ Անծանօթը շուռ եկաւ և... իր կողքին կանգնած էր Արթօն, որը զայրոյթով դիմեց նրան.

—Վահէ, այս էլ երկրորդ անգամն է, որ դու ինձ չես լսում և այսպիսի օրի ես քեզ հասցնում։

—Ա՜խ, Արթօ, ո՞րտեղից հասար և ինչո՞ւ այս դերը միշտ քեզ է վերապահուած. կեանքովն ես քեզ եմ պարտական։

—Թող այդ, ի սէր Աստուծոյ, մենք քեզ հետներս չը վերառանք միմիայն նրա համար, որ դու շատ թոյլ էիր և մաշուած և պատուիրեցինք սպասել մեզ, սակայն դու շատ լաւ ես կատարում մեր պատուէրը. իսկ դուք, անբաղդ ժողովուրդ և սրբազան հայրեր, պատրաստուեցէք, այս գիշեր պիտի դուրս գաք այս սըրբավայրից, որ կարողանաք ողջ փրկել ձեր գլուխները, որովհետև մեզանից մի քանի ժամուայ հեռաւորութեան վրայ գտնուում է Մուստաֆա փաշան, որ ահագին զօրքով այստեղ է գալիս։ Ես երբ իմացայ այդ, ընկերներիս պատուիրեցի նրանց հետևել գաղտագողի. իսկ ինքս շտապեցի ձեզ հաղորդելու այս լուրը և ձեզ դուրս բերելու վանքից։

ԼԵՒՈՆ ԽԱՆԶԱԴԷ

(Կը շարունակուի)

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԻՄ ԵՐԿԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

«Բազմավէպ» ի ներկայ տարուայ Յունուարի տետրում Լէօն շարունակելով «Ռուսահայ վիպագրութիւն» վերնագրով իւր քննադատականը, բաւականաչափ հայհոյանքներ էլ ուղղել է իմ հասցէին։

Պարապ չըգտնելով ժամանակին իմ դիտողութիւնն անել այդ առթիւ, այժմ եմ գալիս նոյն պարտքը կատարելու ընդունելով որ ճշմարտութիւնը երբ էլ որ ասուի, կըմնայ ճշմարտութիւն։

Նախ՝ ես զարմանում եմ որ «Բազմավէպ»ի յարգարժան խմբագրութիւնը իւր յայտարարութեան մէջ՝ «արտաքին աշխատակիցներուն» ուղղուած պայմանների շարքում «Զենք մերժեր թղթակցութիւններ, եթէ գրուին լրջօրէն, առանց կուսակցական ոգւոյն, առանց կրքերու մղումի» խօսքերը դնելուց յետոյ, այսուամենայնիւ, տեղ է տուել Լէօի՝ իմ նկատմամբ գրուած հատուածին, որ ոչ միայն տոգորուած է «կուսակցական ոգւով» ու «կրքերու մղմամբ», այլ և ամփոփում է հայհոյանք, ստութիւն և զրպարտութիւն։ Եթէ յարգելի խմբագրութիւնը դիտմամբ չէ արել այդ բացառութիւնը միայն Լէօի համար, ապա նա կը հաճի թոյլ տալ և ինձ՝ ասել այդ առթիւ մի քանի խօսք, ընդունելով որ իւր թերթի միջոցով զրպարտուածը՝ իրաւունք ունի նոյն թերթում արդարանալու։

Ընդունուած չէ առհասարակ, որ հեղինակը հրապարակ գայ իւր գործերը պաշտպանելու, երբ մատենախօսին մէկը քննադատում է նրանց։ Այդ համարւում է պատշաճից դէմ այն պարզ պատճառով, որ ամենքը գիտեն թէ՝ «Պառաւն իւր թանին թթու չի ասիլ»։

Բայց երբ ինքն իրեն քննադատ ներկայացնողը՝ զուրկ լինելով ծշմարիտ քննադատին վայել թէ՝ պատրաստութիւնից և թէ բարեխղճութիւնից՝ քննութեան առած նիւթը դիտմամբ խեղաթիւրում, կամ հեղինակի անունն արատաւորելու նպատակաւ՝ նրա

երկերին յատկացնում է սուտ ու շինծու թերութիւններ, այդ դէպքում հեղինակն իրաւունք ունի մի կողմ թողնելու համեստութիւնը և հրապարակ գալով՝ մերկացնելու քննադատի չարամտութիւնը։

Այդ իրաւունքը ունիմ և՛ ես, մանաւանդ այն պատճառով որ իմ երկերը 1880-ից սկսած մինչև այսօր տպուել են միայն պարբերական թերթերում ու հանդէսներում և լոյս չեն տեսել առանձին գրքերով։ Հետևապէս, եթէ անբարեխիղճ քննադատը շինծու թերութիւններ էլ յատկացնէ նրանց, այսօրուայ ընթերցողը, որ անծանօթ է անցեալին, պիտի հաւատայ նրան, ըստ որում անկարող է հին թերթերը քրքրելու և քննողի ասածներն անձամբ ստուգելու։

Այսուամենայնիւ, չընդունելով Լէօին իբրև քննադատ, որպիսին լինելու նա ոչ կարողութիւն և ոչ էլ պատրաստութիւն ունի, այլ և ուշադրութեան չառնելով իմ մասին տուած նրա վկայութիւնները թէ՝ իբր ես անյայտ եմ ընթերցող հասարակութեանը, թէ վերջինս չէ ոգևորուել իմ պահպանողական ուղղութեամբ և այլն և այլն—ըստ որում յայտնի է որ Արծրունու յաջորդները «հասարակութիւն» անուանում են միայն նրանց, որոնք իրենց «հաւատն» են դաւանում և իրենց «կուռքին» երկրպագում, իսկ դրանցից դուրս հայութիւն չեն ճանաչում—ես, 'ի հարկէ, չեմ երկարիլ խօսքս այդ ուղղութեամբ։ Բայց կարևոր համարելով ներկայացնել ընթերցողին Լէօի արժանեաց կշռաչափը, առաջ եմ բերում նրա գրուածքից նախ՝ ցանկը այն հայհոյանքների, որ նա ուղղել է իմ հասցէին և երկրորդ՝ այն սուտերն ու զրպարտութիւնները որ յերիւրել է իմ երկերի նկատմամբ։ Այդքանով արդէն ուշիմ ընթերցողը կարող է ընորոշել նրան թէ իբրև մարդու և թէ իբրև քննադատի։

Իմ երկերին նուիրած երկու և կէս փոքրիկ սիւնակներում Լէօն ինձ անուանել է՝ «անհամբերող, յետադէմ, խաւար հասկացողութիւնների տէր, փանատիկոս, թաղանդաւոր, սանձարձակ պարսաւագրող, ուղղափառ հայրենասէր (ծաղր), ամբոխի ստոր կրքերը գրգռող, զրպարտող, առասպելարկու, տիրացու ազգասէր, մարդկանց միտքը թունաւորող, պատմութիւնը կեղծող, հրեշաւոր մեղադրող, կրքից կուրացած, անուանարկող և (վերջապէս) գրականութիւնը պղծող»...

Առաջ բերելով հայհոյանքների այս ցանկը, ինձ ուրիշ ոչինչ չէ մնում ասել, եթէ ոչ յիշեցնել ընթերցողին Բիւֆոնի խօքը՝ le style c'est l'homme—ոճը ինքը մարդն է։ Իսկ ընթերցողը դրանցից պիտի եզրակացնէ այն՝ թէ երբ մի զրագէտ տէր է այսպիսի ոճի, այսինքն՝ խօսելու կամ գրելու ժամանակ կորցնում է գլուխը այն-

քան որ «բաղարձ»-ը շփոթում է «դպրութեան» հետ. այդ արդէն ապացոյց է որ նա զուրկ է բարեկրթութիւնից, բարեխղճութիւնից և գրական ասպարէզը մտնելու արժանաւոր պատրաստութիւնից։ Եւ որովհետև այդպիսի մարդու մտքի ու խղճի առաջնորդը միշտ կիրքն է լինում, հետևապէս նրա պարսաւն ու գովեստն էլ նոյն արժէքը պիտի ունենան, ինչ որ ամեն մի խօսք, վկայութիւն, որոնք ծընունդ են լոկ կրքի։

Այս տեսակէտը՝ Լէօի վերաբերմամբ՝ աւելի լաւ են ճշտում հետևեալները։

Շարունակելով խօսել իմ մասին, նա ասում է.

«Ձեռքի տակ չունենալով հեղինակի բոլոր գրուածքները, միայն կցկտուր տեղեկութիւններ կարող ենք հաղորդել նրա մասին»։

Այստեղ, իսկապէս, պարոնը պէտք է կանգ առնէր։ Որովհետև երբ քննադատը առձեռն չունի հեղինակի գրուածքը, կամ զուրկ է այնպիսի յիշողութիւնից որ կարողանայ կարդացածը անսխալ մտաբերել՝ պէտք է բարեխիղճ լինի և լռէ նրա մասին։ Բայց չէ։ Լէօն որոշել է բոլոր վիպասանների մասին խօսել, բոլորին էլ գանել, վար զարնել և որովհետև դրանց թւումն է և Մուրացանը—ահա նա, թէպէտ ձեռքի տակ չունի նրա գրուածքները, այսուամենայնիւ, սկսում է նրանց մասին խօսել, ապահով լինելով որ թէ չըյաջողի պարսաւել նրանց ճշմարտութիւնը գրելով, այդ կանէ, գոնէ, ստեր յերիւրելով։

Խօսելով «Հայ բողոքականի ընտանիքը» վերնագրով իմ անդրանիկ վիպակի մասին, նա խեղաթիւրում ու այլանդակում է նրա բովանդակութիւնը, մէջ բերելով այնպիսի հետևութիւններ, որ մի ուրիշը չէր կարող հանել նրա ընթերցումից։ Եւ այդ անում է այն ապահով համոզմամբ թէ ընթերցողը չի պիտի համեմատէ իւր գրածը՝ բնագրի հետ։ Եթէ այդպէս չը լինէր, կամ թէ նա ընթերցողին ապուշի տեղ չընդնէր, ապա թոյլ չէր տալ իրեն գրել այսպիսի բան.

«Երբ մենք կարդում ենք նրա (Մուրացանի) գրուածքների ցուցակը, իմանում ենք որ նա գրել է և «իմ կաթոլիկ հարսնացուն» վէպը. կարող ենք թոյլ տալ մեզ առանց նոյնիսկ վէպը կարդացած լինելու, թէ ինչ վերաբերմունք պիտի լինի դէպի այդ կաթոլիկը։ Միայն այս վերնագիրները՝ «Հայ բողոքականի ընտանիքը», «իմ կաթոլիկ հարսնացուն» բաւական են ցոյց տալու համար որ մենք գործ ունենք հայ տիրացուական ազգասիրութեան ներկայացուցիչներից մէկի հետ»։

Բաւական չէ որ մարդ խիղճ չունենայ, ամօթից էլ պէտք է

զուրկ լինի որ կարողանայ այս տողերը յանձնել մամուլին։ Արդեօք տեսնուած է աշխարհում մի քննադատ, որ վիպասանի գրքուածքի միայն վերնագիրը կարդալով, դատաստան անէ նրա մասին։ Մթթէ այս չէ ապացուցանում այն, որ պ՝ որոնը հենց սկզբից է ձգնում նախապաշարել ընթերցողին և տոգորել նրան այն տեսութեամբ, որով ինքն է վառուած գրողի դէմ։ Կայ արդեօք այստեղ գրականութեան ու գեղարուեստին ծառայութիւն մատուցանելու ցանկութեան դէթ մի նշոյլ։

«Իմ կաթոլիկ հարսնացուի» մէջ ես նկարագրել եմ գաղափարական սէրը մի կաթոլիկ հայ աղջկայ և հայադաւան երիտասարդի, որոց ապագայ միութեան սիրով համաձայնել են իրենց մերձաւորները, համարելով այդ երկու ընտանիքների համար մեծագոյն մի բաղդ։ Բայց կաթոլիկ քահանան խանգարում է այդ միութիւնը՝ յայտնի պատճառներով, որոնք բացադրուած են վէպի մէջ։—Չէ՞ն եղել այդպիսի դէպքեր, չէ՞ն լինում և այսօր էլ։ Մթթէ յանցանք է որ ես իմ վէպերով հարուածում եմ կրօնական մոլեռանդութիւնը. կարդացէք վէպը և տեսէք, այդ է նպատակը, թէ ոչ։ Եւ մթթէ միայն բողոքական ու կաթոլիկ հոգևորականների թերութեանց մասին եմ խօսել. նոյնը չէ՞մ արել հայադաւան հոգևորականների նկատմամբ։ Եթէ առաջիններին մէջ հարուածել եմ կրօնական մոլեռանդութիւնը, վերջիններին մէջ էլ եպերել եմ զոշաքաղութեան ախտը, ծուլութիւնն ու անգործութիւնը։ Ապացոյց ձեզ իմ «Զրհաս է» վէպը, որի մէջ հայ քահանաների մի ամբողջ խումբ, իրենց եպիսկոպոսի հետ, դուրս են բերուած կարի անհամակրելի գծերով։ Նոյնը չէ՞մ արած և իմ «Առաքեալ»-ի մէջ։ Ինչո՞ւ Լէօն չէ խօսում գրանց մասին, ինչպէս և այն բազմաթիւ, պատմական ու առօրեայ կեանքից առած վէպերի ու վիպակների, որոնց թիւը հասնում է երեսունի։

Չի խօսիլ, այո՛, որովհետև գրանց մէջ չէ գտնում պատճառ ինձ լաւապէս հայհոյելու։ Իսկ Լէօն գիտէ, որ երբ չէ հայհոյում, իւր գրուածքը արդէն զրկւում է աղից։

Յիշելով իմ «Անդրէաս երէց» պատմական վէպը, ասում է։

«Տէր Անդրէասը պատմական անձնաւորութիւն է։ Առաքել պատմագիրը պատմում է, որ նա ուսուցիչ էր Ագուլիսում և Շահաբասը տեղական Թուրքերի մատնութեամբ նահատակել տուեց նրան։ Մուրացանը միևնոյն դէպքն է պատմում։ Բայց հայ քահանային պարսից շահի ձեռքը մատնողները Թուրքերը չեն նրա համար, ինչպէս վկայում է ժամանակակից պատմիչը, այլ կաթոլիկ հայերը, Նախիջեւանի ունիթորները։ Նոյն իսկ պատմութիւնը կեղծել, այս բանից էլ չէ քաշուել Մուրացանը»։

Ստախօսութիւնն ու զրպարտութիւնը սրանից դէնը անցնել չէ կարող։

Նախ՝ Լէօն, որ ինձ է «պատմութիւնը կեղծող» անուանում, (թէպէտ վիպասանը իրաւունք ունի վէպի մէջ որոշ չափով այդ անելու, օգտուելով քերթողական ազատութիւնից, որի մասին մի անգամ ընդարձակ դաս եմ խօսել Լէօին «Մուրճում», բայց որը նա իբրև բթամիտ աշակերտ մոռացել է). հենց ինքն է այստեղ պատմութիւնը խեղաթիւրում։ Առաքել պատմագիրը չէ ասում թէ տեղական Թուրքերն են Տէր-Անդրէասին մատնել շահի ձեռքը, այլ թէ՝ նա ինքն է մատնել իրեն, կամենալով ազատել ժողովուրդը։ Երբ Շահաբասը մտնելով Ագուլիս, տեսնում է իրեն դիմաւորող բազմութեան մէջ Տէր Անդրէասի աշակերտների գլուխները գերծած՝ (այդպէս արել էին ծնողները, որպէսզի տղաները տգեղ երևալով, շահից չը յափշտակուեն) նա զայրացած հարց ու փորձ է անում թէ՝ ո՞վ է արել այդ։ Ծնողները ուրանում են իրենց մասնակցութիւն այդ գործի մէջ։ Իսկ Տէր-Անդրէասը տեսնելով որ բազմաթիւ մարդիկ պիտի զոհուին, եթէ գործի իսկութիւնը բացուի, որոշում է զոհել իրեն ժողովրդին և շահի մարդկանց առաջ իր վրայ է առնում յանցանքը և ապա նոյնը կրկնում շահի առեաջում։

Այս ձևով էլ ես առաջ եմ բերել դէպքը իմ վէպի մէջ, ճոխացնելով այն վիպական մանրամասնութիւններով։

Բայց Լէօն իւր միջից է հնարում այն, թէ իբր ես ցոյց եմ տուել որ Տէր-Անդրէասին մատնողները եղել են կաթոլիկ հայերը։ Պնդում եմ որ այդ սուտ է, անխիղճ յերիւրանք է։ «Անդրէաս երէցը» տպուած է «Լումայ» հանդիսի 1897 և 1898 թուի գրքերում։ Հետաքրքրուողը կարող է կարդալ։ Այդտեղ ոչ միայն հայ կաթոլիկները չեն ունեցել մասնակցութիւն Տէր-Անդրէասին մատնելու գործում, այլ և նրանց կարգապետ Մատթէոս Երազմոսը և պապի նուիրակ Մարիա Զիտտադինին միջնորդելով շահի առաջ՝ ներումն են ձեռք բերում Տէր-Անդրէասի համար, այն վայրկենին, երբ նա կանգնած է լինում կախաղանի տակ։ Միայն թէ Տէր-Անդրէասը չը կամենալով ազատուած հոչակուել ունիթոռների շնորհիւ, պատռտում է ներման թուղթը և այնպէս նահատակւում։

Առաջ բերած այս փաստերով արդէն ընթերցողը կարող է Լէօի՝ իմ և իմ երկերի նկատմամբ արած քննադատութեան արժէքը չափել։

Ինչ վերաբերում է նրա յօդուածի մնացեալ կէտերին, որոնք նոյն հոգւով ու ուղղութեամբ գրուած լուտանքներ են, թողնում եմ անուշադիր։ Վասն զի իմ երկերը, որոնք մինչև այժմ ցիրու-

ցան էին պարբերական թերթերում, այս տարուայ առաջին կիսից սկսած, հետզհետէ պիտի լոյս տեսնեն առանձին հատորներով։ Ցանկացողներն, հարկաւ, կըկարդան և ըստ այնմ իրենց դատաստանը կանեն։ [1])

ՄՈՒՐԱՑԱՆ

*) Մեր հանգուցեալ աշխատակից Մուրացանը, իր հիւանդութիւնից և մահից բաւական առաջ յանձնելով խմբագրութեանս մի նամակ յանուն Վենետկի «Բազմավէպ»-ի խմբագրութեան, խնդրել էր ուղարկել այն վերջնիս։ Այդ նամակի մէջ նա խնդրում էր յիշեալ խմբագրութեան՝ անմիջապէս ուղարկել «Լումայ»-ի խմբագրութեան իւր մի պատասխան-յօդուածը, որ ուղարկել էր «Բազմավէպ»-ի խմբագրութեան տարիներ առաջ, բայց որ վերջինս չէր տպագրել իր թերթի էջերում։

Մենք կատարեցինք հանգուցեալի կարգադրութիւնը և «Բազմավէպի» այժմեան խմբագրից այս օրերս ստացանք յիշեալ յօդուածը, երկար բացատրութիւններով, թէ ինչ հանգամանքներ ստիպել էին նորան չտպագրել այդ յօդուածը։ Եւ այժմ խմբագրութիւնս հրատարակում է այն անփոփոխ՝ իր հանգ. աշխատակցի կտակը կատարած լինելու համար։ ԽՄԲ.

ԱՄՍՈՒԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՆՉ ԵՆՔ ՍՊԱՍՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՑ

Եթէ ուշադրութեան չառնենք հայոց եկեղեցու անկեալ դրութիւնը մինչև Դաւիթ-Դանիէլ կաթողիկոսների կռիւների վերջը՝ էջմիածինը երբէք այսպիսի ողորմելի և սնանկ վիճակի մէջ չէ եղել, ինչպէս այսօր։ Հանգուցեալ Հայրապետի անիշխանութեան հասնող բարի բնաւորութեան պատճառով բոլոր մեր հաստատութիւնները քայքայուեցան, շնորհիւ մեր եկեղեցական վարիչների ապիկարութեան և վախկոտութեան, էջմիածնի և միւս վանքական կալուածները զրկուեցին իրանց եկամուտներից, դպրոցների հաստատութիւնները ընկան թեթևսոլիկ մարդկանց ձեռքը և հայ ժողովրդի վիճակը տնօրինողները դարձան մարդիկ, որոնք հայ ազգի գաղափարական ձգտումները սպանեցին, ոտնակոխ անելով ամեն սրբութիւն։ Հասարակական խնդիրները և պաշտօնեաների վիճակը սկսեցին տնօրինուել կուսակցական շահերի ազդեցութեան տակ։ Եւ այսպիսի մի ծանր ժամանակ նորընտիր կաթողիկոսի առաջին քայլերից է կախուած նրա ապագայ գործունէութիւնը։

Առաջին խնդիրը, որ կարօտ է լուծման, էջմիածնի և վանքերի տնտեսական դրութեան բարւոքումն է։ Նախ պէտք է էջմիածնապատկան հողերում ապրող գիւղացիների հետ յարաբերութիւնը կանոնաւորել և հողերը տալ հայ ժողովրդին, պահելով էջմիածնի կրթական և տնտեսական կարիքները ապահովելու համար յայտնի քանակութեամբ հող։ Երկրորդ՝ պէտք է մի որևէ մասնաւոր առևտրական ընկերութեան միջոցով մտածել էջմիածնի ազատ մնացած հողերի բարւոքման մասին։ Երրորդ՝ պէտք է նոյնպիսի ընկերութեան միջոցով վանքապատկան այլ ազատ մնացած հողերի և հանքերի մշակման մասին հոգալ։ Չորրորդ՝ պէտքէ թէ հոգևոր դպրոցների և թէ ծխական դպրոցների կանոնադրութիւնները և ծրագիրները ձեռնհաս

մարդկանց ձեռքով վերաքննութեան ենթարկել և նրանց մասին հապճէպ կերպով հրատարակուած և անմշակ կարգադրութիւնները նորից վերաքննել ու փոխել այն բոլոր կէտերը, որոնք պատճառ են լինում մեր դպրոցների խառնակ դրութեան։ Հինգերորդ՝ պէտք է վերջ տալ Էջմիածնի միաբանութեան մէջ տիրապետող մանր և անարժան ինտրիգներին ու կռիւներին։

Յայտնի է, որ մեր վանքաբնակ հայրերը իրենց ժամանակի մեծ մասը գործ են դնում միմիանց դէմ դատաստանական գործեր ստեղծելու, այս կամ այն եղբայրակից վարդապետի կամ սրբազանի հարիւր տարի առաջ գողացած 5 կամ 10 ռուբլի փողի մասին գրելու և հերքելու վրայ։ Այս բոլորին պէտք է վերջ տալ։ Վեցերորդ՝ պէտք է ժողովել Էջմիածնի հին միաբանները, որոնք իրենց բոլոր պակասութիւններով հանդերձ՝ միշտ աւելի շատ են մտածել և հոգացել Էջմիածնի տնտեսական և կրօնական շահերի մասին, քան շատ երիտասարդ գիտնականներ։ Երիտասարդ վարդապետներին պէտք է ուղարկել պաշտօններով ժողովրդի մէջ գործելու, ուր աւելի լայն ասպարէզ կայ նրանց երիտասարդական եռանդի համար, որը Էջմիածնում նրանք վատնում են անմիտ պօլիտիկանութեան փոքրոգի ինտրիգների վրայ։ Եօթներորդ՝ պէտք է Էջմիածնի ճեմարանը իրօք դարձնել մի բարձրագոյն դպրոց, մի համալսարան, ուր կարողանան աշխատել ընդունակ հոգևորականներ և աշխարհականներ առանց թոյլ տալու, որ նրանց վիճակը ամեն օր խաղալիք դառնայ ողորմելի մարդկանց ձեռքին։

Հայրապետական Դիւանը պէտք է կառավարել ոչ թէ 20 ռուբլիանոց գրագիրների ձեռքով, որոնք ընդունակ են պատահական մարդկանց ձեռքին խաղալիք լինել, այլ լուրջ և պատրաստուած անձանց հաւատալ այդ կարևոր պաշտօնը, որպէսզի կառավարութեան հետ ունեցած յարաբերութիւնները չնչին պատճառներով չխանգարուին և Հայրապետը ծանր դրութեան մէջ չընկնի այդ պատճառով։

Այս ամենը գործունէութեան ընդարձակ ասպարէզ է բաց անում ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի առաջ, որ իւր կորովի կամքով և խելամիտ փորձառութեան շնորհիւ անկասկած կարող կլինի բարւոքել Հայ եկեղեցու և ժողովրդի ներկայ աղետալից կեանքի ծանր պայմանները։

ՀՈԳԵՒԱՐՔԻ ՃԻԳԵՐ

Այն ժամանակ, երբ Թրքական կոնստիտուցիան արբեցուցիչ ազդեցութիւն էր գործել ազատութեան այնքան ծարաւի Թիւրքիոյ հայերի վրայ, ժողովուրդը իսկական խենթուկի ուրախութիւններ էր անում և թեթևսոլիկ ժամուլը բացականչում էր «Ալ ազատ ենք»...

Այն ժամանակ, երբ դարերի մահացու թշնամիները սիրոյ ու եղբայրութեան ջերմ համբոյրներ էին փոխանակում և հայ եկեղեցու բեմից Թիւրք սպաներն էին ճառախօսում...

Այն ժամանակ տողերիս գրողը մի շարք յօդուածներ նուիրեց այդ հրատապ հարցին «Երլդրզի կոնստիտուցիան» և «վարագոյրը բացւում է» վերնագրերով, որոնք լոյս տեսան «Մեր Ձայն»-ի էջերում։

Այդ յօդուածներում մենք յայտնել էինք մեր անվստահութիւնը Օսմանեան սահմանադրութեան մասին և որպէս հիմք այդ անվստահութեան յառաջ էինք բերել հետևեալ փաստերը՝

Նախ՝ որ Թիւրքիոյ մահմեդական ժողովրդին հաւասարութեան սկզբունքը անըմբռնելի է, որովհետև թէ տգէտ է և թէ ձրիակերութեան վարժուած։

Երկրորդ՝ որ Թիւրքիոյ յեղափոխականները անկեղծ չեն և իշխանութիւնը իրենց ձեռքը ձգելուց յետոյ չեն յապաղի Համիդից ոչ պակաս հալածանք սկսելու ոչ մահմեդական հպատակների դէմ այն համոզմամբ, որ իրաւունքների հաւասարութեան և գործունէութեան ազատութեան դէպքում մահմեդականները չը պիտի դիմանան նրանց կուլտուրական մրցութեան։

Երրորդ՝ Սուլթան Համիդը չի դադարի իւր միահեծան իշխանութիւնը վերստանալու համար ինտրիգներ սարքել թէկուզ այդ քայլը ծանր զոհաբերութիւններ էլ պահանջելիս լինէին։

Չորրորդ՝ եթէ նոյնիսկ յիշեալ ենթադրութիւնները սխալ էլ լինեն, վերջին խօսքը պատկանում է Թիւրքիայով շահագրգռուած պետութիւններին, որոնց համար Թիւրքիոյ վերածնութիւնը ձե-

ուընտու չի եղել և ձեռնտու չէ. ուրեմն նրանք իրենք պէտք է աշխատեն սահմանադրութիւնը ոչնչացնել, կամ գէթ նրա ջենարար ոգին չեղոքացնել։

Դժբաղդաբար յետագայ դէպքերը եկան ապացուցանելու մեր կարծիքների ճշտութիւնը։ Մենք տեսանք եւրոպական պետութիւնների գաղտնի ինտրիգան, տեսանք թիւրք յեղափոխականներին Բոսֆորի պարլամենտի կենտրոնը գրաւած և ծայրայեղ աջակողմեան ուղղութեամբ վերաբերուելիս դէպի քրիստոնեայ հրպատակների իրաւունքները, տեսանք մահմեդական ամբոխի վերաբերմունքը դէպի իրաւաղուրկ հայը, տեսանք՝ վերջապէս շատ բան։

Եւ 'ի լրումն մեր գուշակութեան, հանդիսատես եղանք և հայկական ջարդերին. ջարդեր, որոնք ըստ հեռագրական տեղեկութիւնների, տասնեակ հազարաւոր զոհեր խլեցին և դեռ շարունակւում են մինչև այսօր։

Ո՞ւմ վրայ է ծանրանում սահմանադրութեան օրերում թափուած այս արիւնը։

«Միութիւն և յարաջադիմութիւն» կոչուած կոմիտէն գտաւ, որ այս կոտորածի հեղինակը եղել է Սուլթան Համիդը և շտապեց այդ մեծ մարդասպանին գահընկեց անել։

Դա շատ լաւ է. մի բոպէ մենք էլ թոյլ ենք տալիս մեզ բացականչելու «փառք և պատիւ նրանց»։

Բայց միևնոյն ժամանակ մենք ուրիշ կարծիքի ենք։

Ով որ Սուլթան Համիդ ասելով հասկանում է նրա անձնաւորութիւնը և անցեալ ու ներկայ չարիքները վերագրում է նրա անձնական քմահաճոյքներին ու ձգտումներին—շատ սխալւում է։

Փորձեցէք նոյն մեծ մարդասպան Համիդին կոչել Միացեալ Նահանգների նախագահութեան պաշտօնին—նա կլինի բոլորովին ուրիշ մարդ, ճիշտ հակապատկերը աշխարհահռչակ չարագործ Համիդի։

Պետական նշանաւոր դիրքեր գրաւող մարդկանց անհատական վատ հակումները աննշան չարիքներ կարող են բերել, երբ նրա տրամադրութեան տակ եղող ժողովուրդը քաղաքակրթուած է, գիտակից իւր արածների։

Որ Սուլթան Համիդի կրծքի տակ մարդկային սրտի տեղ մի հրէշ էր նստած—այդ մենք գիտենք. բայց համոզուած ենք, որ այդ հրէշը կարողանում էր այդքան հրէշաւոր ոճիրներ յղանալ և կատարել տալ հէնց նրա համար, որ թիւրք ազգը ոչնչով չէր զանազանւում իւր միապետից, որ նրանց կրծքի տակ էլ մարդկային զգայուն սրտի տեղ նոյն հրէշն էր նստած։

Այլ սրտի տէր, այլ համոզմունքների ու աշխարհահայեացքների տէր բացառութիւնների մասին չէ մեր խօսքը, որոնց թիւը շատ չնչին է ոչ միայն մահմեդական ամբողջութեան, այլ և յեղափոխականների մէջ։

Ուրեմն Սուլթան Համիդը չէ մենակ պատասխանատուն Թիւրքիայում կատարուած սարսափելի ոճիրներին ու չարիքներին, այլ ամբողջ մահմեդական ժողովուրդը։ Թող որքան կուզեն չքմեղ ձեւացնեն իրենց, թող նորից ու նորից Շիլլիի նահատակների համար հոգեհանգիստներ կատարեն ու իրենց ձեռքերն ու շրթունքը մեկնեն հայերին, այնուամենայնիւ մենք ասել ենք և այժմ էլ կրկնում ենք, որ հայկական արիւնը ծանրանում է ամբողջ Թիւրքիայի մահմեդականների վրայ։

Ոչ մի քարոզ գազանին չի զսպի իւր բնական գազանութիւնը գործել. ոչ մի սահմանադրութիւն Թիւրքիայի քրիստոնեայ ժողովրդին, մանաւանդ անպաշտպան հային չի փրկի Ջարդերի վտանգից, քանի որ իշխանութիւնը կը մնայ մահմեդական դատաւորների, նահանգապետների ու մինիստրների ձեռքում և մահմեդական զօրքի պաշտպանութեան ներքոյ։

Սրանով մենք չենք ուզում ասել, որ Համիդը պէտք է մնար գահի վրայ. ընդհակառակը մենք իւր ժամանակին ասել ենք, որ մինչդեռ Սուլթան Համիդը կը մնայ գահի վրայ և կը շարունակի իւր եղբայրական յարաբերութիւնը Վիլհելմ կայսեր հետ, Թիւրքիոյ սահմանադրութեան գլխին վտանգը, դամոկլեան սրի նման, միշտ կախուած կը լինի։

Պէտք է ասել, որ Մուհամեդ V-ի օրով սահմանադրութեան աւելի քիչ վտանգ է սպառնում։ Բայց եթէ Համիդը, որպէս և իւր սիրելի ու օսմանեան գահի թեկնածու որդին ամենևին գոյութիւն չունենան, վտանգի հաւանականութիւնը աւելի ևս կը պակասի։

Ասում են, որ Մուհամեդ V-ը լիբերալ ուղղութեան տէր մարդ է և անշուշտ շատ ու քիչ սահմանադրութեան կուսակից։ Այլապէս «Մ. և Յ.» կուսակցութիւնը յատկապէս նրան գահ չէր բարձրացնի։

Սակայն նոր գահակալի օրօք սահմանադրութեան վտանգը պակասելով հանդերձ, հայկական Ջարդերի վտանգը մենք պակասած չենք համարում։

Սուլթան Մուհամէդը թող լինի անզուգական սրտի Տէր մի միապետ և անկեղծ սիրող հպատակների խաղաղ զարգացման. այնուամենայնիւ այնկողմը կայ Ջարդարարների մի խոշոր բանակ, որքան խոշոր է Թիւրքիայի մահմեդական ազգաբնակութիւնը։

Մենք տեսանք, որ մի փոքրիկ սայթաքում բաւական եղաւ,

որ մահմեդական խուժանը գլուխը բարձրացնելով երկիրը ողողի հայկական արիւնով։ Մենք տեսանք, որ սահմանադրական վալի-ներից, միւթասէրիֆներից ու գայմագամներից շատերը, հանդերձ սահմանադրական զօրամասերով, ոչ միայն չը պաշտպանեցին հայերին կոտորածից, այլև սկսող և վերջացնողը հէնց իրենք ե-ղան։ Ի՞նչ գիտենք թէ ջարդարարների մեծ մասը քրդական տա-բազի մէջ թաղնուած զինուորներ չէին։

Այդ հարց է. մի հրեշտակային սիրտ ունեցող սուլթան ի՞նչ կարող է անել քրիստոնէական արիւն թափելու և քրիստոնէի ինչքն ու գոյքը յափշտակելու, ոչնչացնելու ընտելացած մի ամբողջ ազգի դիմաց։

Եթէ Օսմանեան սահմանադրութեան սպառնացող վտանգը թուլացած էլ համարենք, այնուամենայնիւ նրա անդամահատու-թեան սպառնալիքը դեռ մնում է իւր ոյժի մէջ։ Առաջ Թրքական գահի վրայ գտնուում էր տարիների փորձառութեամբ զինուած մի դիպլոմատ, որը գիտէ քաղաքական շահմատի խաղի գաղտնիքը կամ գիտէր վտանգաւոր բոպէներում եւրոպական կամ մի եր-կու պետութիւնների սիրաշահելով, յարուցանել միւսների դէմ։

Իսկ այժմ։ Վիլհելմ կայսրը որքան խոստումներ կուզէ, թող անի Մուհամեդ V-ին. այնուամենայնիւ մինչև որ փոխադարձ վըս-տահութիւն կը զոյանայ, եւրոպական համաձայնութիւնը կը կան-խի նրան, մանաւանդ որ հին և նոր ըէժիմներն էլ իրենց խժդը-ժութիւններով պիտի փութացնեն այդ համաձայնութիւնը։

Թիւրքիան կառավարելու և մահմեդական վայրենի կրքերը զսպելու համար երկաթէ ոյժ է պէտք։ Թիւրքիան իրենից մի այդ-պիսի ոյժ հանդէս բերել չի կարող։ Նրա բաժանումը անխուսա-փելի է, եթէ Թիւրքիայով շահագրգռուող պետութիւնները այդ կէտի վրայ համաձայնութեան գալ կարողանան, որը Թիւրքիայի քաղաքական գոյութեան ոչնչացումը կը նշանակի։

Բոսֆորի պարլամենտը, աջակցութեամբ Թիւրքիայի գոյու-թեան և խաղաղ բարգաւաճման նախանձախնդիր Թիւրք կուսակ-ցութիւնների, ամենամեծ հայրենասիրութիւնը արած կը լինեն, եթէ կոլլեկտիւ կերպով դիմեն եւրոպական մեծ պետութիւններին միջ-եւրոպական զօրքով երկիրը գրաւելու առաջարկութեամբ, իհարկէ սահմանադրութիւնը անխախտ պահպանելու պայմանով։

Այդ նեխած պետութեան համար ուրիշ ելք չկայ, թէկուզ այսուհետև մի երկու տասնեակ տարիներ էլ կարողանայ քարշ տալ իւր ողորմելի գոյութիւնը, գործադրի իւր հոգեվարքի ճիգերը։

Mars

ՎԵՐՋԻՆ ՇՆՉԻՆ

Վերջին ժամանակները ամբողջ Կովկասեան հայ ինտելիգենցիան ենթարկւում է խուզարկութիւնների և ձերբակալութիւնների և այս մասին հայ հասարակութիւններից անհրաժեշտ դիմումներ եղան Կովկասի կոմս Փոխարքային և Պետական Դումայի հայ անդամների միջոցով պատշաճ իշխանութեան, բայց այս դիմումը դեռ ոչ մի շօշափելի բարելաւում առաջ չի բերել։ Առանձին կերպով աչքի է ընկնում Հայկական երկու հաստատութիւնների ներկայացուցիչների ձերբակալութիւնը—այն է՝ Ներսիսեան դպրոցի տեսուչ Ա. Ահարոնեանի և Էջմիածնի ճեմարանի տեսուչ Մին. Բերբերեանի։

Այստեղ մեզ հետաքրքրող հարցը այն է, թէ ինչպէս վերաբերուեցին վարչական մարմինները այս երկու ձերբակալութիւնների և մենք այդ խնդրի վրայ մի փոքր կանգ կառնենք։

Ուսումնական տարին համարեա վերջանում էր, երբ ձերբակալուեց Ա. Ահարոնեանը և Ներս. Դպրոցի հոգաբարձութիւնը խոհեմութեամբ որոշեց սպասել դատի արդիւնքին և ապա իւր որոշումը տալ տեսչին պաշտօնում թողնելու կամ արձակելու վերաբերմամբ։ Դորանով էլ հարցը փակուեց։

Նոյնը մենք և ամբողջ հասարակութիւնը սպասում էր Էջմիածնի Ճեմարանի տեսուչ Մին. Բերբերեանի վերաբերմամբ։ Բայց այնտեղի կարճամիտ վարիչների ուղեղը այլ կերպ է խորհում, շնորհիւ իւր տեսակի մտածելակերպի։

Տեղական կեղտոտ ինտրիգների արդիւնքի լուրը ստանալով տ. Տեղապահը շտապեց հետևեալ իսկ օրը արձակել տեսուչ Մին. Բերբերեանին պաշտօնից. կարծէք թէ սպասում էր կառավարութեան այդ քայլին. մի յանցանքի համար երկու անգամ չեն դատում մարդկանց. իսկ Էջմիածնի դիպլոմատները պատրաստ են տասն անգամ պատժել. սա է նրանց մտածելակերպի ձևը։ Ճեմարանում ծագած մի քանի խնդիրները առաջ բերին մի կոնֆլիկտ, որի հետևանք էր ուսուցչական ամբողջ կազմի հրաժարականը բացի պ. Կանայեանից, որի վարմունքի վրայ ապշած ենք մնացել. այս ողջամիտ կարծեցեալ մարդը ստանձնեց մի պաշտօն, որին չէր մօտենայ ոչ մի իսկապէս ողջմիտ մարդ։

Աղաղակող ապօրինութիւններ են կատարւում այժմ Էջմիածնում. նախկին «անիշխանութիւնների» կատարեալ պատկերն է մեր առջևը բացւում. և այս բոլոր անիշխանական գործումներն ու ապօրինութիւնները կատարւում են այն ժամանակ, երբ՝ ազգի

Ընտրեալ Վեհը դիմում է արդէն Էջմիածին, երբ նա պատրաստուում է իւր հօտի ու հաստատութիւնների գլուխ անցնել. մենք այս բանը շեշտում ենք առանձին կերպով և սպասում ենք, որ նորին Սբ. Վեհ. Հայրապետը, հասնելով Էջմիածին, վերջ կդնի ամեն տեսակ ինքնակամութեան և ինտրիգի և իւր արդարադոյն դատաստանը կանէ թէ Ճեմարանի ուսուցչական խմբի և թէ նոյն Ճեմ. տեսուչ Մին. Բերբերեանի վերաբերմամբ. մի տեսչի, որը այժմ այնքան անհրաժեշտ է Ճեմարանին, բարձրացնելու նրա թէ բարոյական և թէ մտաւոր ոյժերը։

Սպասում ենք նաև որ Նա, քննելով անիշխանութեան շրջանի զեղծումները և ապօրինութիւնները, արդար և արժանի պատժի կենթարկի «за превышеніе власти» այդպիսի զեղծումներ անող բոլոր անձանց։ Սրան է սպասում հայ հասարակութիւնը իւր ընտրեալ Վեհից և համոզուած է, որ ազգի ու ազգային կրթութեան կարիքները խորը ըմբռնող Վեհ. Մատթէոս II-րդը յուսախաբ չի անի մի ազգ, որը այնպիսի բուռն ցանկութիւններով սպասում է նրա գալստեան։

ԼՈՒՐԵՐ

Էջմիածնի սինօդը, վեհ. Կաթողիկոսի հաստատութեան թուղթը ստանալով՝ չորս հրաւիրակ ուղարկեց Կ. Պոլիս Ն. Սրբութեան հրաւիրելու մայր Աթոռ և Նորան ուղեկցելու համար. Թիֆլիզի թեմական Տ. Գարեգին Արքեպիսկոպոսին, Արցախի թեմական Տ. Աշոտ եպիսկոպոսին և Մեսրովպ ու Բարգէն վարդապետներին, որոնք և ուղևորուեցան Կ. Պոլիս։

Վեհ. Հայրապետը ընդունելով հրաւիրակներին՝ այցելեց Թիւրքիայի նոր Սուլթանին իւր շնորհակալութիւնը յայտնելու և այնուհետև փոխադրուեցաւ մասնաւոր հիւրատուն։

Կ. Պոլսից մեկնելուց առաջ Նորին սրբութեան հաճելի էր հրաւիրել իւր մօտ Կ. Պոլսի նախկին պատրիարք Օրմանեան սրբազանին, որի հետ ունեցաւ մի երկար և սիրալիր տեսակցութիւն ազգային արդի վիճակի մասին, ինչպէս այդ մանրամասն նկարագրում է «Մշակի Կ. Պոլսի թղթակիցը։

Նորին Սրբութեան Կ. Պոլսից ուղեկցում են բացի Էջմիածնի հրաւիրակներից՝ Մեսրովպ և Գրիգորիս վարդապետներ և ազգային ժողովի նախագահ Մինաս Չերազը։

Կ. Պոլսից վեհը յաջող ճանապարհորդութիւնից յետոյ ժամանեց Օդեսա, ուր տեղական վարչական մարմինների, տեղական և շրջակայ հայ ազգաբնակութեան և Բեսարաբիայի Հայոց առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոսի կողմից ընդունուեցաւ մեծ

շքով և որտեղից ուղևորուեց դէպի մայրաքաղաք Պ. Բուրգ Ն. Կ. Մ. ներկայանալու համար։

Պ. Բուրգի Վարշաւայի կայարանում Ն.Ս. դիմաւորեց տեղական հայ գաղութի ներկայացուցչութիւնը, որտեղից հանդիսաւոր ընդունելութեամբ առաջնորդուեց պատրաստուած օթևանը։

Մայիսի 29-ին Պետերհոֆի մեծ դահլիճում ցերեկուայ 2 ժամին նշանակուած էր Ն. Սրբութեան առանձին տեսակցութիւնը Թագաւոր Կայսեր մօտ, թարգման Պրոֆ. Մառի հետ միասին։

Ն. Կ. Մ. բարեհաճեց դիմել Վեհ. Հայրապետին հետևեալ խօսքերով, որի հետ ժատուցուեցաւ նաև բարձրագոյն հրովարտակ և վեղարի խաչը։

Ուրախ եմ, որ Ձերդ Վեհափառութեան տեսնում եմ ռուս պետութեան սահմանները ոտք դնելու բոպէին Ձեր նոր պարտականութիւնները ստանձնելուց առաջ։

Իմ նախնիքների օրինակով լցուած անփոփոխ բարեացակամութեամբ դէպի հայ ազգութեան պատկանող իմ հպատակները, ինչպէս և դէպի Ձեր հովուութեան յանձնուած հայ-լուսաւորչեան եկեղեցին, ես չեմ կասկածում, որ Դուք Ձեր ապագայ գործունէութեան ժամանակ ամեն ջանք գործ կը դնէք՝ ամրապնդելու Ձեր հօտի անդամների մէջ քրիստոնէութեան հաւատի իսկական ոգին։

Ընդ սմին ես հաւատացած եմ, որ Դուք, իբրև Ձեր նոր հայրենիքի հաւատարիմ զաւակ, հայրենիքի, որ Ձեզ ընդունում է սրտաբաց, կը դրդէք Ձեր հօտին խաղաղ, առաքինի կեանքի և օրինական իշխանութիւնների հնազանդութեան։

Իմ հոգածութիւնների մէջ՝ դաստիարակելու մատաղ սերունդը Քրիստոսի եկեղեցու հետ միութեամբ՝ ես Ձեզանից սպասում եմ առանձին ուշադրութիւն՝ դէպի Ձեր խնամքին յանձնուած եկեղեցա-կրթական հաստատութիւնների կանոնաւորութեան գործը օրինական հիմունքներով, նոցա մէջ կրթութիւն ստացողներին դէպ ընդհանուր հայրենիք Ռուսաստանը սիրոյ և հպատակութեան ոգով կրթելու նպատակով։

Թող ամրանայ դէպի Ձեզ Իմ վստահութիւնը, որ արտայայտուեց Ձեզ Ձեր պատասխանատու պաշտօնում— Ամենայն Հայոց Կաթողիկոս և Էջմիածնի Պատրիարք հաստատելու մէջ։

Այնուհետև վեհը հիւրասիրուել է Պալատում և մեկնել իւր օթևանը։ Ապա Ն. Վ. տեսակցել է նախարարապետ Ստալիպինի

հետ, որոնց մէջ տեղի է ունեցել մտքերի փոխանակութիւն մեր ազգային էական խնդիրների մասին։

Պ. Բուրդում վեհը ջերմապէս հիւրասիրուելով մեր ազգայինների կողմից մայիսի 3-ին մեկնել է Մոսկուա, ուր ընդունելութեան մեծ պատրաստութիւններ է տեսնուած հայ գաղութի կողմից։

Վեհ. Հայրապետը մօտաւորապէս մայիսի 12-13 ին կլինի Թիֆլիզում։ Այդ առիթով ս. Առաջնորդի տեղապահ Եփրեմ վարդապետի հրաւէրով վեհի ընդունելութեան համար քաղաքիս հայոց ամեն տեսակ հաստատութիւններին, ինչպէս նաև վաճառականների, արհեստաւորների և մեշչանների աւագին հրաւէր էր ուղղուած, որ իրանց ներկայացուցիչներն ուղարկեն առաջնորդարան, որոնք միասին կկազմեն մի կարգադրիչ մասնաժողով վեհափառ Հիւրին արժանավայել կերպով ընդունելու համար։ Այդ պաշտօնի համար ընտրուեցան հետևեալ անձինք.—

Մեշչանների վարչութեան կողմից Բ. Առաքելեանց, Արհեստաւորների վարչութեան կողմից Ռաֆայէլեան, Վաճառականների վարչութեան կողմից Ս. Կաֆեանց, Հայ Մամուլի կողմից Հ. Առաքելեան, Ե. Լալայեան և Գիւտ ա. ք. Աղանեանց. Ներսիսեան դպրոցից բժ. Իգիթեանց, Յովնանեան ուսումնարանից Տ. Թադէոսեան, Կովկասի Հայ Բարեգործական Ընկերութիւնից Յ. Շահնազարեանց, Հայ գիւղատնտեսական ընկերութիւնից Ս. Եսայեանց, Հայուհեաց Ընկերութիւնից Ե. Յարութիւնեանց, Հայ որբախնամ Ընկերութիւնից տ. տ. Բայսողլեանց և Խօջամիրեանց, Էժանագին ճաշարանի վարչութիւնից տ. Աւթանդիլեանց, Լոյս Ընկերութիւնից Գ. Լևոնեան, Դրամատիկական Ընկերութիւնից Շիրինեան, Հայ ուսուցչական միութիւնից Ի. Յարութիւնեան, Հայ Ազգագրական Ընկերութիւնից տ. Հ. Մարտիրոսեանց, Մեղու Ընկերութիւնից տ. Մինասեանց և Վարդանեանց։ Յիշեալ պատգամաւորները բաժանուեցան երեք սէկցիաների—1, հանդանակիչ, 2, ծախսարար, և 3, կարգադրիչ, որոնք և եռանդով գործում են արժանավայելչքով ընդունելութեան պատրաստութիւններ տեսնելու։

■ Թիֆլիսում գոյութիւն ունեցող Տնայնագործական ընկերութիւնը ընդարձակելով իւր գործունէութիւնը անուանուեց Հայ գիւղատնտեսական ընկերութիւն. այդ համակրելի ընկերութիւնը անցեալներն ունեցաւ մի մեծ համագումար պ. Ա. Քալանթարի նախագահութեամբ, որի գործունէութեան նկարագիրը լոյս տեսաւ առանձին հատորով։

■ Կարինում բացուել է մի մեծ հայկական տպարան «Յառաջ» անունով, ուր մայիսի 29-ից սկսուել է հրատարակուել «Յառաջ» անունով մի օրաթերթ։

Թիֆլիսից հեռագրում են «Баку» լրագրին, որ բանտարկուած հայ գրագէտներից ոմանց արձակել են 10—15000 ռուբլի գրաւականով։

Ն. Նախիջևանից մեզ հաղորդում են, որ ս. Էջմիածնի ճեմարանի տեսուչ ձերբակալուած Մինաս Բերբերեանի հայրը հեռագրով խնդրել է նախարարապետ Ստալիպինին, որ ի նկատի ունենալով իւր որդու վատառողջ դրութիւնը՝ նորան յանձնեն իւր խնամքին և երաշխաւորութեան մինչև քննութեան աւարտումը։ Հեռագիրն ուղարկուած է քննչի տնօրինութեան։

Մուրացանի երկերը տպագրութեան համար կազմուած մասնաժողովը լուծուեց։

Կ. Պոլսի ազգային ժողովը Տ. Եղիշէ եպիսկոպոս Դուրեանին ընտրեց պատրիարք Թիւրքիոյ հայոց։

Կ. Պոլսում դադարեցրել են «Բիւզանդիոն» լրագիրը և նորա խմբագիր յայտնի Բիւզանդ Քեչեանին ձերբակալել։

«Լուսաբերի»-ի հեղինակները պատրաստել են և մամուլին յանձնել III և IV տարիների դասագրերը, որով ամբողջանում է հայոց լեզուի տարրական շրջանը։

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Տարեկան հաշիւ վասն 1907 ամի ազգային-կրօնական, բարեգործական և կրթական (1907-1908) հաստատութեանց Նոր Զուղայի 3 դպ. գիւղօրէից և եկեղեցեաց Թեհրանի և Ռաշտի (1906—1907)

Ampnemъ, Мамедъ-Али Шахъ· Современная Персія. 1909 г. Александрополь. Цѣна одинъ руб.

Երուանդ վարդ. Տէր Մինասեանց. Յիսուսի կեանքն ու գործունէութիւնը. Համառօտութիւն պ. Վ. Շմիտտի և Ռ. Օտտօի երկերից. Ս. Էջմիածին գինը 30 կոպ.

Եղիշէ Ա. Քռ. Գեղամեանց. Պատմական քաղուածներ. Ա. պրակ. Յովսէփ կաթողիկոս Արղութեան. Բագու գինն է 30 կ. պրակ Բ. Դաւիթ-Դանիէլ կաթողիկոսներ Բագու գինը 30 կ.

Էմմանուէլ ք. Նաղարեան. Խաչեր, Ալէքսանդրապոլ գինը 40 կոպ.

Տեղեկագիր Թիֆլիսի Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցի 1906—1908 թ.

Տեղեկագիր և հաշիւ Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան 1908 թ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Կ. Պոլիս Մ. ա. ե. վերջին օրը ստացանք ձեր յօդուածները, որոնք մնացին հետևեալ համարին։

Ն. Բայազիտ. Խանզադէին. ձեր վէպը նորից սկսեցինք տպել, ի նկատի ունենալով մեր նոր բաժանորդներին։

Բագու Սև քաղաք. պ. Մկրտումեանցին. աւելորդ համարը սխալմամբ է ուղարկուած ձեզ։

Խմբագիր—Հրատարակիչ՝ ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԳԻՒՏ Ա. Ք. ԱՂԱՆԵԱՆՑԻ

ԳԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Է

Դաւիթ կաթողիկոս, մասն Բ.

Ընդարձակ յառաջաբանով, յաւելուածներով, ծանօթութիւններով և մի մեծ վիմատիպ ֆիրմանով.

ԳԻՆՆ Է 4 ՌՈՒԲԼԻ.

Բացուած է 1909 թ. բաժանորդագրութիւնը
(ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ)

ՀԱՍԿԵՐ

մանկական պատկերազարդ ամսագրի

Ամսագիրը լոյս է տեսնում Թիֆլիսում 32—48 երեսանոց մեծադիր գրքոյկներով նախկին ընդարձակ ծրագրով
Մշտական աշխատակցութեամբ ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵՆԱՅԻ ԵՒ ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ

Ամսագիրը ունի նաև ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ուր շօշափւում են ընտանեկան կրթութեան վերաբերեալ կարևորագոյն հարցեր։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍՈՎ

Տարեկան ՀԱՍԿԵՐ, մանկ. բաժին 3 ռ.		մանկավարժ. բաժ. 4 ռ.
Կէս տարուանը	1 ռ. 80 կ.	2 ռ. 10 կ.
Մէկ ամսուանը	— 30 կ.	— 35 կ.
Պարսկաստանում	3 ռ. 50 կ.	4 ռ. 50 կ.
Արտասահմանում տարեկան	ԻՆԸ ֆր.	ՏԱՍՆԵՐԿՈՒ ֆ կ.
Հրատարակութեան սկզբից մինչև 1909 թ. վերջը	11 ռ.	15 ռ.

Խմբագրատան հասցէն՝ Թիֆլիս, Բեհբութեան փող. 25
(Тифлисъ, Редакція журнала «Аскеръ» Tiflis (Caucase) Rédaction du journ. «Hasker».

Խմբագիր-Հրատարակիչ՝ Կատ. Լիսիցեան

ԼՈՒՄԱՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ 14 ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

1909 թուին Լումաան լոյս կտեսնի իւր նախկին դիրքով ամեն ամսի 20-ից յետոյ, բաղկացած 48—80 երեսներից։ Ինչպէս միշտ, հարկաւոր դէպքերում, կտրուեն պատկերներ հասարակական երևոյթների առթիւ։

ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Նիւթերը պիտի գրուած լինին պարզ, մի էջի վրայ և ոչ աւել քան 32 տպ. երես։
2. Արտատպութիւն ոչ մի դէպքում չի տրուում։
3. Նիւթերը չեն վերադարձնուում. յետ ստանալ ցանկացողները պիտի ուղարկեն փոստի ծախք։
4. Զտպուող նիւթերի մասին ծանուցում է տրուում ամսագրի մէջ պատասխանների բաժնում։
5. Թարգմանական նիւթեր ընդունուում են շատ կարճ և ընտիր հեղինակների։

ԲԱԺՆԷԳԻՆՆ է տարեկան 6 ռ., կէս տ. 4 ռ.,
Արտասահման „ 8 „ „ 5 „

ԱՊԱՌԻԿ ՈՉ ՈՔԻ ՉԻ ՈՒՂԱՐԿՈՒԻ

Հասցէն Թիֆլիս Պոլիցէյսկայա 7. Tiflis Polizeiskaja, 7.

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ է

ՆԱՄԱԿԱԳԻՐՔ

երկրորդ ճոխացրած տպագրութիւն

АТРПЕТЪ

МАМЕД-АЛИ-ШАХЪ

Современная Персія

Съ 36 Картинами

Цѣна 1 руб.

Складъ: Тифлисъ Книж. Торг. „Гутенбергъ“. Александрополь. Типог. „Ширакъ“.